Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4515-4526

281.69
S-16

B 2061

ԼՍԱՐԱՆ

ՏԵՏՐ ԱՌԱՔԻՆ

—

«Զեզի կաղաչեմ եղբայրներ, մեր Տէր
«Յիսուս Քրիստոսի անունովը, որ մի և նոյն
«խօսքը ունենաք ամենքդ, և երկպառակու-
«թիւնք չ՝լինի ձեր մէջը, հապա դուք մէկ մըտ-
«քի և մէկ խորհրդի վերայ հաստատուած լի-
«նիք։ (Ա. Կորնթ. Ա. Գլ. 10 հմր)

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. Գ. ԹՕԶԼԵԱՆՑ

Կ. Պոլիս
1875

10983

17500-50

281.6

ԼՍԱՐԱՆ

ՀԱՅՍԱՏԱՆԵԱՅՑ ԿԱԹՈՂԻԿԷԿԵՂԵՑԻՈՅ

ՈՒՂՂԱՓԱՌ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ԸՆԴ ԴԷՄ ԼՈՒՍԵՐԱԿԱՆ ՀԱՅՈՑ

ԽՕՍԵԱՑ

ՏԻԳՐԱՆ Դ. ԴԱՓԱՄԱՃԵԱՆ

24 Օգոստոս 1875 ցիւսկիւտար

Եղբարք իմ.

Իմ այս օրուան խօսակցութեանս նիւթն է, Հայաստանեայց Առաքելական եկեղեցիին բաժանեալ եղբայրները՝ որ «Ա-եղբարական և Բողոքական» անուններով կը յորջորջուին, այս անուանց յարմարութիւն և արժանաւորութիւն ունի՞ն թէ ոչ։ Որովհետև այս երկու անունները մեկզմէկու բարոյապէս հակառակ և քործ.քովալմէկզմէկու անհամաձայն են. վասն զի «Ա-եղբարական», ըլլաղը Բողոքական չի կրնար ըլլար. և ճշմարիտ Ա-եղբարականը հեղգհոգի, խաղաղասէր, համբերող և ներող պէտք է ըլլայ ըստ Սուրբ գրոց. ղոր օրինակ. Քրիստոս մեր Փրկիչը պատուիրեց ասելով.

„Թէ որ մէկը ապտակ զարնէ քու աջ երեսիդ, դարձո՛ւր անոր
„միւսն ալ, թէ որ մէկը որ կուզէ քեզ հետ դատ վարել՝ և
„քու շապիկդ առնել, թո՛ղ անոր քու բաճկոնդ ալ. և ով
„որ քեզ պահակ բռնէ և մէկն մի ճանբայ քշէ, գնա՛ անոր
„հետ երկուք„։ Ս. Հաւասիկ Քրիստոսի այս պատուիրանաց
մէջ՝ ո՛չ բողոքել, ո՛չ դանդատել և ոչ ալ տրտունջ ընել
կայ, այլ միայն սիրով և համբերութեամբ հնազանդու-
թիւն կպահանջուի ճշմարիտ Ս. Լեռտարանականէն, այս վկա-
յութիւններով մեր բաժանեալ եղբարց Ս. Լեռտարանական
անունը կեղծ ու չինծու է, որ քիչ մը վերջը Ս. Գրոց ու-
րիշ վկայութիւններովը աւելի պ՛տի բացատրեմք մեր խո-
սակցութեան նիւթը։

Ս. Լեռտարանական Սուրբ անունը անարժան ըլլալնին
փոքր 'ի շատէ ապացուցանելով այժմ քննենք թէ՝ „Բողոքա-
կան„ անուան յարմարութիւն ունի՞ն թէ ո՛չ։

Մարդ մը բողոքելու և բողոքական կոչուելու համար
պատճառ մը և առարկայ մը ունենալու է, կամ անձին
կամ պատուոյն և կամ իւր ստացուածքին. զոր օրինակ,
զրկանք, բռնութիւն, հալածանք կամ ո՛ և իցէ կերպիւ
նեղութիւն մը կրելու է որ՝ բողոքելու իրաւունքը ունենայ,
եթէ ընկի Գերմանացի Լուտեր վարդապետին „Փրոթեստանդ„
անուան ներքև մտնելով՝ նոյնը իրենց սեպհականել
կուզէն. այն մարդը բողոքելու և Փրոթեսթանդ կոչուելու
կերպով մը իրաւունք ունէր, վասն զի ինչպէս որ շատեր-
նուդ յայտնի է, 16 դդ. դարուն՝ Պապական եկեղեցւոյն
մէջ „Հաւատաքննութիւն„ կոչուած դիւական ատեանը
կազմուելով աքսոր, հալածանք, դող ու սարսափ և մահ
ի՛սպառնար ժողովրդեան, բայց մեր կաթուղիկէ եկեղե-
ցւոյն մէջ դոցա ստուերն անգամ չ'լինելէն 'ի զատ, ամէն
Քրիստոնեայ եկեղեցիներէն ալ աղատ ճանչցուած, և իւր

պարզ և անխառնիւ դրութեամբն ալ եղակի հանդիսացած է.
ուրեմն այդ պարոնները ո՛չ բողոքելու իրաւունք և ո՛չ ալ
բողոքական կոչուելու յարմարութիւն ունին։

Բայց դարձեալ քննենք թէ՝ ի՞նչէ դոցա բողոքը մեր
սղատ եկեղեցւոյն դէմ։

Ս. Հաւասիկ՝

Կաթուղիկէ եկեղեցւոյն ընդունած սրբոց բարեխօսութիւնը,
պատկերաց յարգումը. կուսակրօնութիւնը, մեռելոց օծութիւնը և այլն
և այլն „բայց եթէ ասենք Ս. Գիրքերէն եղած և հաս-
տատուած չ'լինիլն, թերևս իրաւունք ունենային բողոքելու.
նախ՝ սրբոց բարեխօսութեան վերայ խօսիմք թէ կա՞յ արդ-
եօք Սուրբ Գրոց մէջ։

Բայց դեռ այս նիւթին վրայ չխօսած, մեր Ս. Գրոց
թարգմանութեանց մասին երկու խօսք ընել կուզեմ՝ որով-
հետև մեր բաժանեալ եղբայրները՝ մեր թարգմանութիւն-
ները կասկածելի ցոյց տալով՝ պարզամիտ ժողովուրդը դայ-
թակղեցընելու կենկրտին, ասելով թէ՝ „մեր սուրբ գիրքերը Հե-
բրէական և Յունական բնագիրներէն ճշդիւ թարգմանուած են։

Պէտք է դիտնալ որ Հինգերորդ դարուն մէջ՝ Քրիս-
տոսի 410 թուականին, մեր Ս. թարգմանիչները Սահակ
և Մեսրոպ իրենց աշակերտներովը թարգմանեցին հին Կը-
տակարանը Եօթանասնից թարգմանութենէն, (Եօթանասնից
կոչուած թարգմանութիւնն է, որ Պտղոմէոս Փիլադէլփոս
անունով, Եգիպտոսի թագաւորին հրամանաւը 72 հրէայ
Ռաբբիներ թարգմանեցին. Քրիստոսէ 273 տարի յառաջ) և
նոր Կտակարանն ալ նոյնպէս Յոյն բնագրէն, աչքէ անցնե-
լով նաև Հրէից, Ասորւոց և Սրաբացւոց թարգմանութիւն-
ները, մեր թարգմանութեան նման ընտիր և գեղեցիկ
թարգմանութիւն ուրիշ լեզուի մէջ չըլլալը՝ օտար ազգիք
ալ կը վկայեն, որոնք Հայերէն լեզուով Աստուածաշունչը

կարդացեր են, ինչպէս որ Լաքրոզ Հոլանտացի Երեւելի հեղինակը համարձակեցաւ ըսել թէ՝ «Հայերէն թարգմանութիւնը՝ ՆՈՒՐՈՒՀԻ Է ՈՐԻՇ ԱՂԻՈՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՆԸ»։

Արդ՝ քանի որ օտարները կը վկայեն մեր Ս. Գրոց հարազատութեան և հաւատարիմ թարգմանութեանը, ալ ընաւ կասկածելու տեղի չը մնար մեզ, և օտարացեալ եղբարց անհեթեթ խօսքերն ալ անհիմն ըլլալով՝ կարեւորութիւն տալն ալ խոհականութեան հակառակ է, և դուք այս ալ կրնաք մակաբերել, որ Յունական և Հռովմէական եկեղեցիները երբեմն մոլեռանդութեան կիրքերէ շարժեալ Հայաստանեայց եկեղեցին կը հարուածէն՝ թէ բանիւ և թէ հրատարակութեամբ. սակայն օր մը ընաւ չեն ասած թէ Հայոց Ս. գիրքերը սխալ թարգմանած են կամ խեղաթիւրած են։

Խօսիմք մենք հիմա սրբոց բարեխօսութեան վրայ, և սուրբ գիրքերը քննելով նոցա սխալմունքներն ալ յայտնեմք թէ ո՞րչափ խեղաթիւրած են Ս. Գիրքերը։

Հին Կտակարանին մէջ կը կարդամք թէ՝ Երեմիա մարգարէն Ժողովրդեան թշուառութեանը համար կ'աղօթէր Աստուծոյ և կաղաչէր որ գթայ անոր և փրկէ զանիկայ «Եւ տերը ինձ ըսաւ, Մովսէս և Սամուէլ արդէն մեռեալ «Սուրբերն ալ ինձի բարեխօսեն, մտիկ պիտի չընեմ կսէ՝ անոնց անզղջութեանը համար»։ (Երեմիա ԺԵ. Գլ. 1 համար) ուրեմն Մովսէս ու Սամուէլ այնպէս ալ ուրիշ հանդուցեալ սուրբերը կը բարեխօսեն կենդանեաց համար, և եթէ կենդանիները արժանաւորութիւն ունին նոցա բարեխօսած շնորհքներուն, Աստուած պիտի ընդունի նոցա բարեխօսութիւնը։

Յովբ երանելին երբոր աշխարհիս փորձութեանց մէջ իյնալով թշուառութեան մէջ կը հեծէր, այն ժամանակ ի-

րեն երեք բարեկամներ եկան մխիթարութեան համար, ասոնց մէջէն Եղիփազ Թեմանացին յանդիմանեց զՅովբ, ասելով թէ՝ ամբարիշտ ըլլալուդ համար է որ աս պատուհասը Աստուած տուաւ քեզ, «թէ որ ամբարիշտ չես, սուրբ ես, «և Աստուծոյ երկիւղը ունիս, հիմա աղօթք ըրէ՝, սուրբերը կանչէ՝, հրեշտակներուն պօռա՝, նայինք ո՞վ պատասխան պիտի տայ քեզ, և ո՞վ օգնութեան պիտի դայ»։ (Յովբ. Ե. Գլ. 1 համար)։ բայց բաժանեալ եղբայրները այս խօսքերը խեղաթիւրելով այսպէս կը թարգմանեն։

«Հիմա աղաղակէ՝, քեզ պատասխան տուող մը կա՞յ «արդեօք, ու Սուրբերէն որո՞ւն պիտի դարձնես քու ե«րեսդ»։

Դարձեալ.

Յովբայ պատմութեան մէջ գեղեցիկ նկարագրութիւն մը կը կարդամք՝ որ սուրբ Հոգւով ներշնչուած է, հրեշտակայ բարեխօսութեան և չարաց չարախօսութեանը վրայ։ «Արդ՝ օր մը Աստուծոյ որդիքը դային Տէրոջը առջևը կայ«նելու և սատանան ալ եկաւ անոնց մէջ» (Յովբ Ա. Գլ. 6) Աստուծոյ կամ Տէրոջը առջև կայնելու խօսքերը՝ կը նշանակէ թէ մահկանացուաց համար խօսիլ Աստուծոյ հետ, բարի կամ չար, որ խօսքին դատակարգութենէն ալ կրնայ հասկըցուիլ որ սատանան պաշտելու համար չէր որ եկաւ կայնեցաւ Աստուծոյ առջև, այլ չարախօսելու համար եկեր էր. Սատանան Յովբին համար իւր չարախօսութիւնը ըրաւ և Աստուծոյ թոյլտուութեամբը ջնջեց անոր։

Զաքարիա մարգարէն գիշերը իր տեսիլքին մէջ տեսաւ որ հրեշտակը կը բարեխօսէր Աստուծոյ, եւ կաղաչէր որ Հրէից ազգին ողորմելով գերութիւننին վերջայրնէ, և Աստուած ընդունեց անոր բարեխօսութիւնը ինչպէս որ գրուած է։ «Եւ Տէրոջը հրեշտակը պատասխան տուաւ և ըսաւ, ո՛վ զո-

«բաց Տէրը, մինչև ե՞րբ չես ողորմիր Երուսաղէմին, և Ցու-
«դայի քաղաքներուն, որոնց այս եօթանասուն տարին բար-
«կացար։ Եւ Տէրը ինձ հետ խօսող հրեշտակին՝ բարի խօս-
«քերով, և մխիթարական խօսքերով պատասխան տուաւ և
ինձ հետ խօսող հրեշտակը ինձ ըսաւ, կանչէ ու ասա՝»։
(Զաքարիա, Ա. Գլ. 12—14 համար)

Դարձեալ.

Դանիէլ մարգարէն Բաբելոնի գերութեան մէջ եղած
ժամանակ, տեսիլքին մէջ սովրեցաւ հրեշտակէն թէ՝ ո՞ր-
չափ հրեշտակներ կը միջնորդէն և կօգնեն մարդոց փրկու-
թեանը համար, և ո՞րչափ չար հրեշտակներ կը հակառա-
կին, ահա լսեցէ՛ք՝ թէ ինչ դեղեցիկ կը նկարագրէ, «Եւ
«ինձ ըսաւ (հրեշտակը ըսել կուզէ) մի՛ վախնար, ո՛վ Դանի-
«էլ, քանզի այն առջի օրէն՝ի վեր՝ որ քու սիրտդ տուիր հաս-
«կանալու, և քու Աստուծոյդ առջևը քու անձդ խոնարհե-
«ցընելու, քու խօսքերդ լսուեցան, և ես քու խօսքերուդ
«համար եկայ, բայց Պարսից թագաւորութեան իշխանը
,,քսան և մէկ օր իմ երեսիս դէմ կեցաւ, սակայն ահա Մի-
,,քայէլ, առաջին իշխաններէն մէկը, ինձ օգնութեան
եկաւ . . . և ըսաւ ինձ, դիտե՞ս թէ ինչո՞ւ համար քեզի ե-
,,կայ, և հիմայ Պարսից իշխանին դէմ պատերազմելու պի-
,,տի դառնամ, և երթալուս պէս՝ ահա՛ Յունաց իշխանը պի-
,,տի դայ։ Բայց ես ճշմարտութեան գիրքին մէջ գրուածը
,,քեզ պիտի պատմեմ, բայց ասոնց մէջ մէկը չկայ որ ինձ
,,օգնէ, բայց միայն ձեր իշխանը Միքայէլ,, (Դանիէլ, Ժ.
Գլ. 12—21)։

Դարձեալ.

Սողոմոն իմաստունը յայտնապէս և յայտնի յանուանէ իւր
Հօրը Դաւթի անունը մէջ կը բերէ Աստուծոյ առջև, և զայն
միջնորդ բռնելով նորա անուանը համար լսեր Դաւթի շնորհ կը

խնդրէ Աստուծմէ և Աստուած ալ կը կատարէ անոր խնդրուա-
ծքը։ (Բ. Մնաց. Զ. գլուխը ամբողջ կարդացողը պիտի
տեսնայ Սողոմոնի խնդրուածքները, և իւր հօրը միջնոր-
դութիւնը հայցելով նոցա կատարումը։

Դարձեալ,

Բ. օրինաց 9 երրորդ գլխուն և 26 երրորդ համարին
մէջ կը կարդամք որ Մովսէս մարգարէն կապաչէր Աստու-
ծոյ Հրէից աղդին համար, և Աբրահամու Իսահակայ և Յա-
կովբայ անուններուն մէջ կը բերեր, «Ո՛վ Տէր Եհովայ, մի
,,կորսընցներ քու ժողովուրդդ և ժառանգութիւնդ, որոնք
,,քու մեծութեամբդ ազատեցիր և զօրաւոր ձեռքով ե-
,,գիպտոսէն հանեցիր։ Քու ծառաներդ՝ Աբրահամը, Իսա-
,,հակը և Յակովբը յիշէ՝, և այս ժողովուրդին խստութեանը՝
,,անօրէնութեանը եւ մեղքին մի՛ նայիր,,։

Սաղմոսի ՃԼԸ. գլխուն մէջ կը կարդամք որ՝ Դաւիթ
Աստուծոյ օծեալ Մարգարէն ալ՝ իւր աղօթքներուն մէջ
սուրբերը կը յիշէր ասելով՝ ինձ շատ մեծարու եղանք բարե-
կամներդ ով Աստուած,, բայց նոքա քաջեկամ բառը խորհուրդ թարգ-
մանած են, որուն Եբրայեցերէնը ՃՆԷԿ է, և Եբրայեցւոց
ՃՆԷԿ անուանեալ Ս. գրոց մեկնութեանց մէջ՝ աւելի ընդ-
բառը կը չօշափէ, քան թէ խորհուրդ, Սրբոց բարեխօսու-
թիւնը ունայնացնելու համար մեծ ճիգ կը թափեն այդ
պարոնները, որովհետև կարելի եղածին չափ Ս. գիրքերը
բնագրաց հետ բաղդատեցինք և տեսանք որ շատ տեղերը
խեղաթիւրած, բառեր աւելցուցած և շատ տեղեր ալպակ-
սեցուցած են՝ որ հետզհետէ ցոյց պիտի տանք։

Քրիստոս խաչին վրայ եղած ժամանակ և այն կսկիծաղին
ցաւոց մէջ «Էլի՛ Էլի՛ լամասաբաքթանի,, գոչեց՝ այն տեղ
գտնուող Հրէայները՝ կարծեցին թէ Եղիան կը կանչէ, Եղի-
այէն օգնութիւն կուզէ, եւ անոնցմէ մէկին ալ ըսաւ՝ ,,թո՛ղ

տուր տեսնենք. թէ Եղիան կուգա՞յ ատիկայ վար իջեցը-
նելու,, : (Մարկ. Ժ. Գլ. 34— 36 համար) :

Բայց Լուտերական Հայերը կըսեն թէ հին օրինաց մէջ
Սրբոց բարեխօսութիւնը կընդունուէր, բայց Աւետարանին
մէջ Սրբոց բարեխօսութեան վերաբերեալ բան մը չիկայ
գրուած, ուրեմն Աւետարանն ալ քննենք մի անգամ, եւ տես
նենք թէ Քրիստոս Սրբոց բարեխօսութիւնը կը մերժէ՞ թէ
կը հաստատէ :

Մատթէոս Աւետարանչի 18 երրորդ գլխոյն եւ 10 եր-
րորդ համարին մէջ գրուած է որ՝ Քրիստոս մեր Տէրը ըսաւ
,, Զգոյշ կեցէք որ՝ այս փոքրիկներէն մէկը չանարգէք, քանզի
,, կըսեմ ձեզի որ երկնից մէջ նոցա հրեշտակները միշտ կը
,, տեսնեն իմ հօրս երեսը որ երկինքն է,, : Կը հարցնեմ թէ
Քրիստոս այս խօսքերով ի՞նչ հասկացընել կուզէր, չէ՞ որ նո-
ցա հրեշտակները փոքրիկներուն համար կը միջնորդէն Աստու-
ծոյ առջեւ անոնց համար բարեխօսելով, եւ զանոնք անարգողաց
համար ալ կը չարախօսեն, Քրիստոսի այն խօսքերը
եթէ ուրիշ միտք կամ մեկնութիւն մը ունի, թո՛ղ յայտնեն
մեզի, ես կըսեմ որ Քրիստոս մեր Փրկիչը ուղղակի եւ ան-
ուղղակի կերպով յայտնեց մեզ Սրբոց բարեխօսութիւնը, զոր
օրինակ, Ղուկասու 13 երրորդ գլխուն մէջ (6—9) առակ մը
կը կարդամք որ Քրիստոս ըսաւ, ,, մարդ մը իւր այգիին մէջ
տնկուած թզենի մը ունէր, եւ եկաւ անկէ պտուղ փնտռե-
,, լու եւ չգտաւ, ուստի՝ ըսաւ այգեպանին, ահա երեք տարի
,, է որ կուգամ այդ թզենւոյն վրայ պտուղ փնտռելու, եւ
,, չեմ գտներ, ալ ատի կտրէ, ինչո՞ւ համար գետինը խափա-
,, նէ : Անի պատասխան տուաւ ու ըսաւ անոր՝ Տէ՛ր, այս տարի
,, ալ ատի թո՛ղ, մինչեւ որ դորա բոլորտիքը բրեմ եւ աղբ
,, ցանեմ, եւ կարելի է պտուղ բերէ, ապա թէ ո՛չ՝ գալ տարի
կտրես ատիկայ,, : Եթէ Քրիստոս ըսաւ այս առակը, ինչպէս

որ տարակոյս չունիմք. հարկաւ միտք եւ բան մը հասկա-
ցընել կուզէր, մենք այս առակէն երկու միտք կը հետեւ-
ցընենք, առաջինը՝ Աստուած ծառայի մը աղաչանքը եւ
միջնորդութիւնը ընելու միշտ պատրաստ է, երկրորդ՝ ան-
գէգ եւ անբարեգործ քրիստոնէից թոյլատուութիւն կընէ
Աստուած, որ բարի գործքերով եւ ապաշխարութեամբ
կատարեալ Քրիստոնէութիւն ունենան, եւ ոչ անպտուղ թը-
զենւոյն պէս երկիրը խափանեն :

Դարձեալ

Ղուկասու 16 երրորդ գլխուն մէջ կը կարդամք (27 31)
Մեծատան եւ Ղազարոսի առակը, յորում Մեծատու-
նը դժոխոց մէջէն Հայր Աբրահամու կը բարեխօսէ իւր
եղբարց փրկութեանը համար, ըստ որում Եկեղեցւոյ Ս.
Հարք՝ կը հաստատեն թէ՝ Աստուածային պէս հաւատարիմ
Սրբոց միջնորդութիւնք ու բարեխօսութիւնքն կընդունուին,
եւ Մեծատան պէս դատապարտելոց բարեխօսութիւնները
չեն ընդունուիր. ոչ թէ Սուրբերը միայն կը բարեխօսեն Աս-
տուծոյ առջեւ այլ եւ կը բողոքեն ալ ինչպէս որ
Յովհաննէս Աւետարանիչը Պատմս կողին տեսած տե-
սիլքին մէջ տեսաւ որ Սուրբ Մարտիրոսները կը բողոքէին
Աստուծոյ արդարութեան եւ իրենց արեան վրէժը կը
պահանջէին : ,, Եւ երբոր հինգերրորդ կնիքը բացաւ, սե-
,, զանին ներքեւ տեսայ այն մարդոց հոգիները, որ սպան-
,, նուած էին Աստուծոյ խօսքին համար եւ նորա վկայու-
,, թեանը համար, որ իրենք ունէին, և մեծ ձայնով աղաղա-
,, կեցին ու ըսին, ո՛վ Սուրբ եւ ճշմարիտ Տէր, մինչեւ ե՞րբ
,, չես դատեր, եւ մեր արեան վրէժը երկրի բնակիչներէն
պահանջեր, եւ սպիտակ հանդերձներ տրուեցաւ անոնց եւ
,, ըսուեցաւ անոնց, որ քիչ մը ժամանակ ալ դադրին, մին-

չեւ որ անոնց ծառայակիցները եւ անոնց եղբայները ամբողջանան, որոնք իրենց պէս պիտի սպաննուէին (Յայտ. Զ. Գլ. 9—10 համար)։

Յովհաննու յայտնութեան 5 երրորդ գլխոյն և 8 երրորդ համարին մէջ՝ նոյնպէս 8 երրորդ գլխոյն 3—4 համարներուն մէջ կը կարդամք, որ երկինքի սուրբերը և հրեշտակները Աստուծոյ աթոռոյն առջև միջնորդութիւն կընեն մարդոց համար, նոցա աղօթքները անուշ խունկերուպէս բուրվառներով Աստուծոյ Ս. սեղանին մատուցանելով, ,, Եւ երբոր ,, գիրքը առաւ, չորս կենդանիները և քսան և չորս ,, երեցները դառնուկին առջեւը ինկան, և ամենքն ալ քը- ,, նարներ ունէին, եւ ոսկիէ խնկամաններ խունկով լեցուն, ,, որ սուրբերուն աղօթքն է.... Եւ ուրիշ հրեշտակ մը ե- ,, կաւ սեղանին առջեւ կայնեցաւ. և ոսկեղէն խնկանոց մը ,, ուներ, և իրէն շատ խունկ տրուեցաւ, որ բոլոր Սրբոց ,, աղօթքներուն հետ աթոռին առջեւը եղողոսկի սեղանին հետ ,, մատուցանէ, և խունկերուն ծուխը սրբոց աղօթքներուն ,, հրեշտակին ձեռքէն Աստուծոյ առջեւը ելաւ ,,։

Մենք այս նիւթերուն մէջ չեմք ուզեր որ մեզնէ խօսիմք. այլ աւելի կը փափագիմք որ Ս. գրոց վկայութիւնները խօսին, մեր եկեղեցւոյն հակառակորդաց դէմ. և անպարտելի վկայութեամբք դատախազ հանդիսանան, ուստի Քրիստոսի Տեառն մերոյ հրէից ժողովրդեան խօսած մէկ վկայութիւնն ալ յառաջ կը բերեմք, որ գրուած է Յովհաննէս Աւետարանչի Դ. գլխոյն և 45 համարին մէջ որ կ'ըսէ, «Մի՛ կարծէք թէ ես ձեզի համար չարախօսութիւն պիտի «ընեմ հօրը, կայ մէկը որ ձեզի համար չարախօսութիւն «կընէ՝ Մովսէսը՝ որուն դուք յուսացած էք»։ Պէտք է գիտնաք որ՝ այս խօսքերուն մէջ եղած ՀԱՐԵՍՈՒՆԻՆ բառը «ՄԵՍՈՒՆԻՆ» թարգմանած են. անշուշտ այն նպատակաւ,

որպէս զի ընթերցողը չարախօսութիւն բառէն բարեխօսութիւն չհետեւցընէ, և կամ թէ բարեխօսութեան հաւատք չընծայէ։ Բայց ես կը հարցնեմ ձեզի թէ՝ երբոր Մովսէս չարախօսութիւն կընէ ապաշնորհ հրէից համար, միթէ՞ Սուրբերը բարեպաշտ քրիստոնէից համար չէ՞ն բարեխօսեր և չպիտի՞ բարեխօսեն։ Եթէ քրիստոնէական Ս. կրօնը աւելի հաւատքով ընդունիլ կուզեն, ինչպէս որ իրենք գրած ու հրատարակած են, ուրեմն սրբոց բարեխօսութեանը համար ինչո՞ւ անհաւատութիւն կընեն, որ այսչափ ալ վկայութիւն կայ Ս. գրոց մէջ. իսկ եթէ Ս. գրոց մէջ վկայութիւններ եղած չլինեը. այն ժամանակ իրաւունք պիտի ունենային բողոքելու։ Բայց տեսնենք թէ ի՞նչ է դոցա հակառակութիւնը և ցոյց տուած վկայութիւններն։ Առաջին Տիմոթէոսի Բ. գլխոյն և 5դ. համարին մէջ գրուած է թէ՝ «Քան- «զի մէկ աստուած մը կայ. և մէկ միջնորդ մը Աստուծոյ «և մարդոյ մէջը, Քրիստոս Յիսուս մարդը»։ Եթէ այս խօսքերուն մէջ գրուած «ՄԻ ՄԻՋՆՈՐԴ» բառէն կը հետեւցընեն թէ ուրիշ միջնորդ չկրնար ըլլար, ուրեմն վաղն ալ պիտի հետեւցնեն և պիտի պնդեն թէ՝ Քրիստոսը Աստուած չէ՛, այլ մարդ է. որովհետեւ առաքեալը այնպէս գրած է պիտի ըսեն. այն ժամանակ Սրբոց Հերետիկոսին հետ ձեռք ձեռքի տալով գեհենի ասպարէզը նետուելու են «ուր այն տեղ լաց և ատամներու կրճտելն կը լինի»։

Բայց ես այդ պարոններուն կը հարցնեմ թէ՝ Առաքեալը այդ խօսքերը Տիմոթէոսին գրած ժամանակը՝ նորահաւատ Քրիստոնեայները Քրիստոսի Աստուածութեան վրայ ի՞նչ դատափարտ ունէին և ինչպէ՞ս ըմբռնած էին, ըսել կուզեմ թէ՝ հօր Աստուծոյ փառակից, էակից, համազօր և համակամ ընդունա՞ծ էին թէ ո՛չ, — այս հարցմանս պատասխանը ընդունելիս վերջը՝ այս նիւթին վրայ դարձեալ

կը խօսիմք։

Եւ հիմա Ս. գրոց ուրիշ վկայութիւնները քննենք, Ս. առաքեալը Կորնթացւոց երկրորդ թղթոյն Ե. գլխոյն և 18-21 համարներուն մէջ կը գրէ թէ՝ «Սակայն ամէն բան Աստուծմէ է, որ մեզ իրեն հետ հաշտեցուց Յիսուսի Քրիստոսով ձեռքովը, և տուաւ մեզ հաշտութեան պաշտօնը. այսինքն Աստուած էր, որ Քրիստոսով աշխարհս իրեն հետ հաշտեցուց, և անոնց յանցանքները իրենց չհիշեց. և հաշտութեան խօսքը մեր մէջը դրաւ, ուրեմն Քրիստոսի կողմանէ դեսպանութիւն կընենք, ինչպէս որ Աստուծոյ կոչմանէ մեր բարեխօսութիւնը, կաղաչենք ձեզի Քրիստոսի կողմանէ, հաշտուեցէք Աստուծոյ հետ»։

Այս խօսքերէն յայտնի կը տեսնուի որ՝ Յիսուս Քրիստոսի ունեցած հաշտութեան բարձր պաշտօնը իւր սրբոյը տուաւ. և ինչպէս որ Քրիստոսի կողմանէ դեսպանութիւն կընեն մարդոց՝ այնպէս ալ կը բարեխօսեն առ Աստուած մարդոց համար. բայց Լուսաւորչական Հայերը սրբոց բարեխօսութիւնը ուրանալու համար՝ «Ինչպէս որ Աստուծոյ կոչմանէ մեր բարեխօսութիւնը» խօսքերը անհասկանալի կերպիւ աղաւաղելով, կը թարգմանեն այսպէս. «Էբրեւ թէ Աստուած էր բարեխօսէր մեզմէ»։

Եղբարք իմ, եթէ Ս. Գիրքերը աշխարհաբար լեզուի թարգմանելով՝ ժողովուրդեան դիւրութիւն տալ և հասկանալի ընել էր բաղձանքնին, ինչո՞ւ ուրեմն այսպէս անհասկանալի խմաստներով կը խճողեն՝ իրենց թարգմանութիւնը, եթէ նոյն տողերը գրող Սրբազան առաքեալն ալ կարդայ այդ աղաւաղեալ թարգմանութիւնը, դարձեալ պիտի չկարողանայ հասկանալ։

Խնդրեմ որ ուշադրութեամբ ունկնդրութիւն ըրէք Յովհաննու Աւետարանչին 14 երրորդ գլխոյն և 12 երրորդ համարին մէջ գտնուած Քրիստոսի խօսքերը, «Ճշմարիտ ճշմարիտ կըսեմ ձեզ. թէ այն որ ինձ կը հաւատայ, այն գործքերը որ ես կը գործեմ, ինքն ալ պիտի գործէ, և անոնցմէ աւելի մեծ գործքեր պիտի գործէ»։ Այս իշխանութիւնը իւր ընտրեալ սրբոյը տուողը Քրիստոսն էր, ուրեմն ինչպէս կրնայ ըլլար որ մարդկային հոգւոց փրկութեանը համար սքանչելեաց և հրաշից իշխանութիւն տուող Փրկիչը՝ դարձեալ մահկանացուաց հոգւոց փրկութեանը համար Սրբոց բարեխօսութիւնը և միջնորդութիւնը չլսի և չընդունուի Քրիստոսէն. վասն զի մենք Քրիստոնեայներս կը հաւատամք և կընդունիմք որ՝ Քրիստոս մարդկային ազգի հոգւոց փրկութեանը համար աշխարհ եկաւ, այնպէս ալ հոգւոց փրկութեան համար սրբոց կողմանէ եղած աղաչանքը և բարեխօսութիւնը պիտի ընդունի և կընդունի։ Եւ Քրիստոս ինքն ալ կը հաստատէ ասելով թէ՝ «Ձեզ կըսեմ որ այդպէս ուրախութիւն կըլինի երկինքը մէկ մեղաւորի մը համար որ կապաշխարէ» (Յով. ԺԵ. ԳԼ. 7 տե՛ս նաև 10 համար). կը հարցընեմ թէ՝ այն սուրբերը և կամ անոնց հոգիները ի՞նչպէս կրնան դիտնալ որ երկրի վրայ մեղաւոր մը դարձի եկաւ և կամ դարձի եկեր է, վասն զի եթէ չգիտնան ու չդիտնան՝ ի՞նչպէս պիտի ուրախանան. և Քրիստոսի այս խօսքերէն աւելի ի՞նչ ապացոյց կրնայ ըլլար այն մարդոց՝ եթէ հաւատք ունին, քանզի իրենք գրած են անցեալ Մատթէոս Զ՝ ամսաթուով հրատարակուած 15. երրորդ Դիտակ Լրագրոյն մէջ թէ՝ «Տարբ հաւատքվ մեր կարդարանայ և ոչ թէ գործովվ» կերպով որ իրենց քարոզած հաւատքին վրայ իրենք ալ կասկած ունին. որ սրբոց բարեխօսելուն չեն կընար հաւատար. ուրեմն այդ պարոնները հաւատք չունին. վասն զի կատարեալ հաւատք ունեցող եւ քարոզողը՝ պէտք չէ որ երկմիտ ըլլայ. որովհետև երկմիտ մարդը Տէրոջմէն բան

մը սահանալիք չունի. ինչպէս որ Յակոբոս առաքեալը իւր Ընդհանրական թուղթին և Ս. դլխոյն (6—8) հմրին մէջ կը գրէ՝ ,, վասն զի այն որ երկմիտ է, ծովուն հողմակոծեալ ,, և տատանեալ ալիքներուն. նման է, այն մարդը թո՛ղ ,, չը կարծէ թէ տէրոյմէն բան մը պիտի առնէ, երկմիտ ,, մարդը անհաստատ է իւր բոլոր ճամբաներուն մէջ։

Ս.րդ, դառնամք հիմա այն կէտին վրայ խօսելու որ գործքը կուրանան և հաւատք քարոզելով աչքակապութեան կելնեն. գործքը ուրանալը որչափ Ս. Գրոց հակառակ և օ՛րշաւ հակասական ըլլալը մի առ մի պիտի բացատրեմ։

Ա.հաւասիկ։

Մարկոսի 5 երրորդ գլխուն և 25 երրորդ համարին մէջ կը կարդամք թէ՝ ,, կնիկ մը կար որ 12 տարի արիւն թա- ,, փելու հիւանդութեան մէջ էր, և խիստ վշտացած էր շատ ,, բժիշկներէն, և իւր բոլոր ստացուածքը վատներ էր, և օ- ,, գուտ մը չէր դտեր, այլ ևս առաւել զայրացեր էր. եր- ,, բոր Յիսուսի վրայով լսեց, ետեւէն եկաւ բազմութեանը ,, մէջ. և անոր հանդերձին դիպաւ, ինչու որ իւր միտքին մէջ ,, կսէր, թէ որ միայն անոր հանդերձներուն դիպչիմ պիտի ,, բժշկուիմ։ Եւ շուտ մը իւր արիւնին աղբիւրը ցամքե- ,, ցաւ և այլն և այլն։

Եթէ մարդս հաւատքով միայն կրնայ փրկուիլ. ուրեմն ի՞նչ հարկ կար որ Քրիստոսի հանդերձին դիպեր, քանզի երբ այն սէրը և այն հաւատքը Քրիստոսի վրայ ունեցաւ՝ առանց որ և իցէ գործողութեան պէտք էր որ այն կինը փրկուէր, վասն զի հաւատքին առաջին նշանը գործքն է, և հաւատքը անտեսանելի բան մը ըլլալով գործքով պէտք է յայտնուի։

Դարձեալ,

Մատթէոս աւետարանչի Թ. գլխոյն և 27րդ համարին

մէջ կը կարդամք թէ՝ ,, երբոր Յիսուս ճանապարհէն կանց- ,, նէր. երկու կոյրեր ետեւէն կաղաղակէին ու ,, կըսէին. ողորմէ՛ մեզի որդի Դաւթի. և երբոր տուն ,, եկաւ, կոյրերը իրեն եկան, և Յիսուս անոնց ըսաւ. կը հաւատա՞ք՝ թէ կրնամ այս բանը ձեզի ընել, ըսին անոր, ,, այո՛ Տէր, այն ժամանակ անոնց աչքերուն դիպաւ ու ը- ,, սաւ, ձեր հաւատքին պէս ըլլայ ձեզի. և անոնց աչքերը ,, բացուեցան։ Մի՞թէ Քրիստոս չէ՞ր գիտեր որ կոյրերը բժշկուիլ կուզեն, ուրեմն ի՞նչ պատճառ կար հարցանելու մենք այս խօսքին պատասխանը սուրբն Գրիգոր Նարեկացւոյն կը յանձնեմք որ գեղեցիկ կերպով կը ճառէ ասելով, ,, ըստ որում հարցեալ Փրկչին ամենից ցոմանս՝ ախտացեալս ,, տեսանելեօք, հաւատա՞ք ասելով առ այդ թէ կարող եմ ,, առնել ձեզ զայդ, ո՛չ պարզևեաց աչաց նոցա լոյս, եթէ ,, ոչ նախ զհաւատոցն գրաւ ընկալաւ, (Նարեկ. ԺԱ. Գ.) Ա.րդ. մեր բաժանեալ եղբարց հաւատոյ գրաւը ի՞նչ պիտի ըլլայ. քանզի Քրիստոս միչև որ (Ա.յո՛ Տէր) հաւատոյ գրաւը չընդունեց՝ կուրաց աչքերուն չմերձեցաւ կըսէ Ս. Գիրքը։

Դարձեալ

Մատթէոս Աւետարանչի 25րդ գլխոյն մէջ Քրիստոս գեղեցիկ առակ մը կը պատմէ ասելով՝ ,, Այն ժամանակ երկ- ,, նից թագաւորութիւնը պիտի նմանի տասն կոյսերու որոնք ,, իրենց լապտերները առնելով՝ փեսան և հարսը դիմաւո- ,, րելու ելան. ասոնցմէ հինգը իմաստուն էին և հինգը յի- ,, մար. որ յիմարները առին իրենց լապտերները և հե- ,, տերնին իւղ չառին, բայց իմաստունները իրենց լապտեր- ,, ներուն հետ ամաններով իւղ առին, և փեսան որ ուշա- ,, ցաւ ամէնն ալ թմրեցան ու քնացան, և կէս գիշերին ,, ձայն մը եղաւ, Ա.հա փեսան կուգայ՝ ելանիկայ դիմաւո-

„ըն՝ու եղէք, այն ժամանակ բոլոր կոյսերը եկան և իրենց
„լապտերները կաղմեցին. և յիմարները ըսին իմաստուններ-
„ըուն. տուէ՛ք մեզի ձեր իւղէն. ինչու որ մեր լապտերները
„մարելու վրայ են. պատասխան տուին իմաստունները՝ ու
„ըսին, չըլլայ որ մեզի ու ձեզի չբաւականանայ. այլ վա-
„ճառականներուն դացէք և գնեցէք ձեզի համար, երբոր
„անոնք գնացին գնելու, փեսան եկաւ, և պատրաստ ե-
„ղողները անոր հետ հարսնիքը մտան, և դուռը գոցուե-
„ցաւ. Վերջը միւս կոյսերը եկան՝ ու ըսին, Տէ՛ր Տէր՝
„բա՛ց մեզի. բայց անիկայ պատասխան տուաւ ու ըսաւ,
„ճշմարիտ կըսեմ ձեզի, թէ ես ձեզ չեմ ճանչնար „

Ս.հաւասիկ Քրիստոսի ցոյց տուած առաջ կոյսերը Քրիստոնեայ ժողովուրդը ներկայացնել կուզեր, լապտերները Քրիստոնէից հաւատքը. և իւղը Քրիստոնէից ընելիք բարեգործութիւնը. որ ըսել ուզեց թէ՝ միայն լապտերը՝ այսինքն հաւատքը ունենալով չէք կրնար փրկուիլ, այլ հաւատոյ գործքերով պատրաստուած պիտի ըլլաք որ կարողանաք Աստուծոյ արքայութիւնը մտնել. ապա թէ ո՛չ (յիմար կուսանց) այսինքն անբարեգործ Քրիստոնեայներուն պէս դուրսը պիտի մնաք. ուրեմն գործքը ուրացող քրիստոնեայները պարտին հետևիլ բարեգործութեան, որպէս զի երկնաւոր փեսայի տեսութենէն չզրկուին ըստ առաջին Քրիստոսի։

Եւ Պետրոս առաքելոյն երկրորդ թղթոյն առաջին գլխոյն և 10 համարին մէջ ալ պատուիրած է ընդհանուր եկեղեցեաց ասելով՝ «եղբայրնե՛ր, աւելի ջանացէք, որ բարի գործերով ձեր կոչումը և ընտրութիւնը պահէք. ինչու որ այս ըսելով բնաւ պիտի չվրիպիք»։ Պէտք է դիտնաք որ այս խօսքերուն մէջ եղած բարի գործերով խօսքերը վերցուցած են իրենց թարգմանութենէն։

Հիմա ինձ պիտի հարցնէք թէ՝ եթէ բարի գործքերով

1n



ԼԱՍՐԱՆ

ՏԵՏՐ ԵՐԿՐՈՐԴ

«Ուսամ ես ալ երբոր լսեցի Տէր Յի-
«սուսն վրայ ունեցած հաւատքնիդ . և
«բոլոր սուրբերուն վրայ ձեր ունեցած սէ-
«ը . չեմ դադարիր ձեզ համար գոհաւ-
«թիւն ընելէն , ձեզ իմ աղօթքներուս մէջ
«յիշելով » ։
(Եփեսացւոց Ա. Գլ. 15–16 հմր.)

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Գ. ԲՕԶԱՅԱՆՑ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՍՀ
Ա. ՄԱՍՍԵՐԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ
17501-58

Պետրոս առաքելոյն թուղթէն վերցուցին՝ հապա Յակոբոս առաքելոյն երկրորդ գլխոյն մէջ գրուած բարեգործութեան վերաբերեալ խօսքերը ինչո՞ւ չվերցուցին։

Որովհետև Յակոբոս առաքեալը բարեգործութեան վրայ ընդարձակ կերպով գրածէ, այդ պատճառաւ չէր կրնար վերնալ. բայց վատահ եղիք որ ասկէ հարիւր տարիէն շատ բաներ պիտի պակսեցնեն, ինչպէս որ 1856 թուականէն առաջ տպուածները և նոյն թուականէն վերջը տպուածները մէկզմէկէ բաղդատելու որ ըլլաք, շատ տարբերութիւն պիտի տեսնէք։ Սրդէն անցեալ շաբթու Գերապատիւ Մատթէոս Հայր սուրբը Յակոբոս առաքեալին բարեգործութեան մասին գրած վկայութիւնները մանրամասնաբար պատմած ըլլալուն, չեմ ուզեր կրկնել. և սուրբ գրոց ուրիշ վկայութիւնները կուզեմ մէջ բերել։

Մատթէոս Աւետարանչի 19րդ. գլխոյն եւ 16րդ. համարին մէջ կը կարդամք որ «Հրեայ պատանի մը եկաւ «Քրիստոսին և ըսաւ անոր, բարի վարդապետ ինչ բարի գործեմ, որ յաւիտենական կեանքը ընդունիմ..... «Քրիստոս պատասխանեց, թէ որ կուզես կեանքը մտնել, «պատուիրանքները պահէ, ըսաւ անոր, որո՞նք, և Յիսուս «ըսաւ, ասոնք, մի՛ սպաններ, մի՛ շնար, մի՛ գողնար, մի՛ «սուտ վկայեր, քու հայրդ և մայրդ պատուէ, և քու «ընկերդ քու անձիդ պէս սիրեա։ Պատանին ըսաւ անոր, «ասոնք ամէնը մանկութենէս ի վեր պահեր եմ, ալ ի՞նչ «բանով պակաս եմ, ըսաւ անոր Յիսուս, թէ որ կուզես «կատարեալ ըլլալ, դնա՛ ունեցածդ ծախէ, և տուր աղ- «քատներուն և երկինքը դանձ պիտի ունենաս, և եկ «իմ ետեւէս, երբոր պատանին այս խօսքը լսեց՝ տրտմած «գնաց, ինչու որ պատանին շատ ստացուածք ունէր։

Ա. հաւասիկ այս խօսքերէն յայտնի կտեսնուի որ Քրիս-

տաս բարեգործութիւն պահանջեց պատանիէն. եւ արդէն
աւ կ'ցանկար այն պատանին, բայց ժլատ լինելով չկարողա-
ցաւ իւր ստացուածքը վաճառել. ուստի դրկուեցաւ Ս.
տուծոյ արքայութենէն ըստ բանին Քրիստոսի։ Եւ ոչ թէ
մեր կենդանութեան ժամանակ բարեգործութիւն կ'պա-
հանջուի մենք, այլ եւ մեռնելնէս վերջն աւ պիտի հարցուի
մեզի, որովհետեւ մեռելները յարութիւն առնելէն զկնի
գործք պիտի պահանջէ Քրիստոս, լսեցէք ի՞նչ կըսէ Քրիս-
տոս, որ գրուած է Յովհաննէս Աւետարանչի 5րդ. գլխոյն
եւ 25 համարին մէջ. «Զինչու որ ժամանակ պիտի գայ, որ
«բոլոր գերեզմաններու մէջ եղողները անոր ձայնը պիտի
«լսեն, եւ դուրս պիտի գան, անոնք որ բարի գործեր են
«կենաց յարութեան համար, եւ անոնք որ չար գործեր
«են, դատապարտութեան յարութեան համար»։ Գործքը
ուրացող պարոնները ի՞նչ կըսեն ա՛յս վկայութեանց, կամ
իրենց անհաւատութիւնը պէտք է խոստովանին եւ կամ ապի-
տութիւնին, որովհետեւ այն քրիստոնեայն որ սուրբ գիրք
կ'կարդայ եւ այն գրուածոց վրայ ճշմարիտ հաւատք ունի
պէտք է խղճի մտօք ընդունի. եւ ո՛չ թէ հակառակ վար-
ուելով եկեղեցւոյ դէմ ապստամբի, քանզի ճշմարիտ քրիս-
տոնեայն հաւատքով եւ ընդ նմին գործքով պիտի ճանչ-
ցուի. զի «հաւատքը առանց գործքի մեռած է»։

Լուտերական Հայոց մէկ վարպետութիւն աւ յայտ.
նեմ։

Մատթէոս Աւետարանչին վերջին գլխոյն եւ 18րդ.
համարին մէջ գրուած է որ Քրիստոս ըսաւ իւր աշակերտ-
ացը. «Որպէս առաքեաց զիս Հայր ես առաքեմ զձեզ»։ Ս. յսինքն,
ինչպէս որ Հայրը ինձ ուղարկեց, ես աւ ձեզի կուղարկեմ,
այս խօսքերը վերցնելով քիչ մը անդին գրուած «Ստացէք
Սուրբ Հոգին», խօսքերն աւ՝ բոլոր Աստուածաշունչ թարգմա-

նած են, հերետիկոս բառը յունարէն բառով ամեն ազգերը
թարգմանելը մեծ խաբեբայութիւն է. եւ այս այն նպատակաւ
բրած են, որպէս զի մարդ չկարողանայ հարցանել իրենց թէ՝ ԲՐԻՍՏՈՆԵԻՑ ՄԷՋ ԲՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ ՔԱ.
ՐՈԶԵԼՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ Ո՞Վ ՏՈՒԱՒ ԶԵԶԻ, ուստի
կ'խնդրեմք որ՝ մեր բրած այս խօսքերը եւ ցոյց տուած
սխալները նիս, ոչ թէ միայն լսելով անցնիք. այլ հետամուտ
ըլլաք մեր եւ նոցա Ս. Գիրքերը բաղդատելու, որպէս զի
լաւ համոզուիք ճշմարտութեան։

Սրդ՝ փոքր իշատէ հասկացուցաւ որ մեր բաժանեալ
եղբայրները ո՛չ Աւետարանական անուան արժանաւորու-
թիւն եւ ո՛չ ալ բողոքական անուան յարմարութիւն ունին,
եթէ բողոքելու բան մը կայ՝ այն ալ իրենց երկմիտ ըլլալն
է. ուստի պէտք է իրենց խղճին եւ իրենց անհաստատ վի-
ճակին դէմ բողոքեն. բայց քանի որ մեր արմնակից եղ-
բայրներն են, պարտիմք խնդրել տիեզերաց արարչէն որ՝
գարձ եւ զեղջ տայ անոնց, որ իրենց մայրենի եկեղեցւոյ
գիրկը դառնալով՝ խաչեալ փրկիչը ուրախացնեն. նոյնպէս
Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ հայրերնիս հրճուեցնեն երկ-
նից մէջ, որ իւր բաղմաչարչար նահատակութեանը հա-
յաստան աշխարհը լուսաւորած և իւր արդիւնքն ու թոռուն-
քը զոհ տուած է։

Ի վերջոյ մեր խորին շնորհակալութիւնը կ'յայտնեմք
Կրօնական պատկառելի ժողովին, որ մեր խնդրանաց եւ
խնդրագրաց պէտքն ու կարեւորութիւնը ճանչնալով թա-
դիս մէջ Լսարանս հաստատելու հրաման տուաւ յուրա-
խութիւն եւ ի միխիթարութիւն բարեպաշտ ունկնդրաց, եւ
տար Աստուած որ մեր դաւառացի ազգայնոց վրայ ալ յա-
տուկ խնամք տարուէր որ Լուտերական անիծից ազատնք
չ'տարածուի անոնց մէջ. քանզի լաւ դիտնամք որ մեր եկե

զեցւոյ պաշտօնեայները եւ աղդիս ողջամիտ մասը Աստուծոյ առջեւ պարտաւոր եւ պատասխանատու պիտի մնան, թէ՛ ատ եւ թէ՛ հանդերձեալ աշխարհի մէջ։

ՅԱՐԳՈՒՄՆ

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԵՒ ՍՐԲՈՑ ՊԱՏԿԵՐԱՑ

Եղբարք իմ.

Անցեալ շաբթու սրբոց բարեխօսութեան վերայ խօսելով՝ այս օր ալ սրբոց պատկերաց և կուսակրօնութեան վերայ պիտի խօսիմք. յայտնի է որ ասոնք կրօնի էական կէտերը չեն, այլ միայն աւանդութիւններ են որ մեր Սուրբ եկեղեցին՝ դարձեալ սուրբ գիրքերէն ընդունելով, հազարաւոր տարիներէ ի վեր հաւատարմութեամբ կծառայէ, ինչպէս որ ասացինք. թէեւ կրօնի էական մասերը չեն՝ բայց և այնպէս մեր բարեպաշտ և պարզամիտ ժողովուրդը զայն գայթակղեցնելու համար՝ Լուտերական Հայերը իրենց ձեռքը գործիք ըրած են և անով կ'մոլորեցնեն Քրիստոսի հօտը, և կապաշ կամ պոպէրապաշ կանուանեն, այն եկեղեցին՝ որ իւրեանց կեանք տուած և բարոյական սնունդ մատակարարած է, մեր եկեղեցւոյն համար «կռապաշտ» անուանողները եթէ անդիտութեամբ ըսած ըլլային՝ թերեւս ներելի ըլլար դոցա այդ բարբաջմունքը, բայց սակայն մենք լաւ համոզուած եմք որ, այդ պարոնները դիտութեամբ կը զրպարտեն մեր եկեղեցին, քանի որ անոր մէջ ծնած են և նորա ամէն դաւանութեանց և դրութեանց տեղեկութիւն ունին և ունեցեր են։

Դոցա ցոյց տուած վկայութիւնը՝ Ելից 20 րդ գլխոյն

և 3 րդ. համարին մէջ գրուածներն են, որ Աստուած Մովսէս մարգարէին պատուիրեց ասելով, «իմ առջեւս ուրիշ «Աստուածներ չունենաս. դուն քեզ համար կուռք չշի- «նես, ոչ ալ վերը երկինքի մէջ, կամ վարը երկրի վրայ. «կամ երկրին ներքեւ ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ «նմանութիւնը չշինես, անոնց երկիրպագութիւն չընես և «զանոնք չպաշտես, ինչու որ ես եմ քու Տէր Աստուածդ. դարձեալ՝ ըսաւ Աստուած ժողովուրդին, «Դուք տեսաք «որ ձեզ հետ երկինքէն խօսեցայ, ինձնէ զատ ոսկի Աստ- «ուածներ չշինէք, ոչ ալ արծաթ Աստուածներ շինէք «ձեզի. Արդ, կ'հարցնեմք մեր մոլորեալ եղբարց, և իրենք ալ իւրեանց կրծեցեալ Աւետարանով՝ խղճին թո՛ղ հարցանեն թէ՝ այն պատկերները որ մեր եկեղեցւոյն մէջ զետեղած ունիմք, իրրեւ Աստուա՞ծ կ'պաշտեմք անոնք թէ՝ իրրեւ զարդ, և իրրև յիշողութեան առարկայ, և թէ իրրեւ նոյն նահատակեալ սրբոց հաւատքին նմանելու և նոցա սուրբ վարուց հետեւելու նպատակաւ է։ Բայց մենք դեռ անոնց պատասխանը չընդունած՝ մեր խօսքերը հաստատեմք. նախ՝ ասացինք թէ իրրեւ զարդ կ'զետեղեմք.

Որովհետեւ Աստուած Մովսէս մարգարէին կուռքեր և նմանութիւններ չշինելը պատուիրելէն զկնի, հրամայեց որ (Ելից Իե. Դլ. 10–40 համար) «Անփուտ վայրէ տա- «պանակ մը շինես, նորա երկայնութիւնը երկու կանգուն «ու կէս, և նորա լայնութիւնը մէկ կանգուն ու կէս և նո- «րա բարձրութիւնը մէկ կանգուն ու կէս լինի, Եւ զանի «զուտ ոսկիով պիտի պատես., ներսէն ու դրսէն պիտի «պատես այն, և նորա վրան ու բոլորտիքը ոսկի շրջանակ «մը պիտի շինես, և նորա համար չորս ոսկի օղակ ձու- «լես. և նորա չորս անկիւնները դնես զանոնք, և նորա «մէկ կողմը երկու օղակ և միւս կողմը երկու օղակ լինի։

«Եւ անիրաւութիւնքդ պիտի չինեա և զանոնք ոսկիով
«ոչիտի պատեա . . . : Եւ ոսկիէ երկու հերուբէներ պիտի շի-
«նեա քառաթեւան երկու ծայրին վրայ, կռածոյ պիտի չինեա
«զանոնք . . . . : Եւ հերուբէները ընդարձակ վերեն տարածելով իւր-
«եանց թեւերովը քառաթիւնը պիտի ծածկեն . . . . : Քե-
«ռուբէներուն երեսները դէպ ի քառաթիւնը պիտի լինի» :
«Եւ զուտ ոսկիէ աշտանակ մը պիտի չինեա . . . . : Եւ նորա
«բունը, ճիւղերը, սկահակները, գնդակները և ծաղիկ-
«ները իրմէն պիտի լինին : Եւ նորա եօթը ճրագներ պիտի
«չինեա . և նորա ճրագները վառուած ժամանակը լոյսը
«առջևէն տան, և նորա սնելիները և նորա բաղմակալ-
«ները զուտ ոսկիէ պիտի լինին» :

Ահաւասիկ չէ՞ որ այս հրամանն ու պատուէրն ալ Աստուած ըրաւ մարդարէին, կրնա՞ն համարձակիլ ասելու թէ՝ Աստուած իւր ժողովուրդը կրկին անգամ կռապաշտութեան հրաւիրեց . կամ այս պէսք է ընդունին, ապա թէ ո՛չ, պիտի խոստովանին որ Աստուած իւր դպրութիւնը և երկնի և երկրի Արարիչ ըլլալը ժողովուրդեան յայտնելէն վերջը՝ իւր փառքն ու զօրութիւնը ցոյց տալու համար՝ այն զարդարուն ու շքեղ Տաղտակը շինել հրամայեց, որով ժողովուրդը աւելի սերտ սէր ունենայ Աստուծոյ վերայ, և հեթանոսութենէ յառաջ եկած չար սովորութիւնները և անբարոյական վարմունքնին ալ հեռացնելու սկսաւ, ուստի մենք ալ անճառելի Աստուծոյն դպրութիւնը դատանել ու երկրպագու ըլլանէս վերջը՝ իւր ամենամեծ փառայը համար և իւր ճշմարիտ անունը համար մարտիրոս եղող սրբոյ պատկերները մեր աչաց առջև կը դնենք, որ մեր արարչի սիրոյն և խնամոցը վրայ աւելի հաստատուելիք և նորա պատուիրանաց համեմատ կազդուրելիք մեր սիրտերը, եթէ այն ոսկեայ և թեւատարած քերովբէները հե-

թանոսութենէ նոր դարձած ժողովուրդը կռապաշտութեան չառաջնորդեցին, ուրեմն ի՞նչպէս կրնայ ըլլար որ Աստուածապաշտ և բարեպաշտ քրիստոնեայները՝ Տէրունական և սրբոյ պատկերաց ներկայութեամբը կռապաշտութեան առաջնորդուին կամ կռապաշտ համարուին . դոյա այս անհեթեթ առարկութիւնը լոկ զրպարտութիւն է՝ և ոչ այլ ինչ :

Դարձեալ,

Թուոց 21րդ գլխոյն (4—9) մէջ կը կարդանք որ՝ երբ Իսրայելացւոց ժողովուրդը «Հովը լեռնէն Կարմիր ծովուն «ճանբան չուեցին . և ճանբուն մէջ ժողովրդեան սիրտը նե-«զացաւ : Եւ ժողովուրդը Աստուծոյ և Մովսէսի դէմ խօ-«սեցան, ասելով, Ինչո՞ւ մեզ Եգիպտոսէն հանեցիք որ՝ «անապատին մէջ մեռնինք . քանզի հաց չկայ, ջուր չկայ, «և այս չնչին հացէն մեր սիրտը զզուեր է . եւ Տէրը ժո-«ղովուրդին վրայ կատաղիչ օձեր ուղարկեց . և խածին ժո-«ղովուրդը, այնպէս որ՝ Իսրայէլէն շատ ժողովուրդ մե-«ռաւ . Եւ ժողովուրդը Մովսէսին եկան, ու ըսին . Տէրոջը «և քեզ դէմ խօսելով մեղանչեցինք . աղօթք ըրէ Տէրո-«ջը որ մեր վրայէն օձերը վերցնէ . և Մովսէս ժողովրդե-«եան համար աղաչեց, և Տէրը ասաւ Մովսէսին, քեզի օձ «մը չինէ և զանի նշանակի մը վրայ դիր, և լինի թէ ով որ «խածնուի, անոր նայի և ապրի . Եւ Մովսէս պղնձէ օձ մը «չինեց, և զանի նշանակի մը վրայ դրաւ, և եղաւ որ՝ օձ մը «երբոր մարդ մը խածնէր, անի պղնձէ օձին նայելով կը «բժշկուէր» :

Սրժանէ պիտանալ որ՝ այս խօսքերուն մէջ «Հաղ» բառ մը աւելցուցած են . Աստուած՝ իբրեւ թէ Մովսէսին հրամայած ըլլայ որ Հաղ օձ մը չինէ . դոյա նպատակը այն է որ՝ այդ օձին տրուած Աստուածային զբաղելիքը ուրանան, և

հեշտ ըսելով բնական աղդուութեան վերածեն. որպէս թէ այն օձը ըստիւ (ճէհէննէմ թաշը) զօրութիւն ունեցած և օձահաբ ժողովուրդեան վէրքերը խարած ըլլայ, բայց վրատահ եղիք որ բնագրին մէջ կիրող բառին նշոյլը չիկայ, որուն եբրայեցերէնը ՝՝՝

տութիւն մեր վրայէն մէկ կողմ ձգենք. և մեզ դիւրաւ պա-
շարող մեղքը, և համբերութեամբ վազեմք մեր առջեւը
դրած ասպարէզի ընթացքը « » (Եբրայ. 12. Գլ. 1 համար)
Ս. յս խօսքերուն մէջ եղած հոպոմոնիան բառը «ծանրոմիան»
թարգմանած են որ՝ բնաւ մէկզմէկու չեն համաձայնիր,
վասն զի հոպոմոնիան մահացու մեղք ըլլալով՝ ծանրու-
թիւն բառն ալ «ծանրաբարոյութիւն» նշանակութիւն ունենալով՝
միմիանց հակառակ և հետեւաբար հակասական են։

Բայց եթէ առաքելոյն Թեսաղոնիկեցւոց դրած 2 րդ.
թղթոյն 2 րդ. գլխոյն և 6 րդ. համարներուն համեմատ վար-
ուիլ ուզենք՝ կը պարտաւորիմք մեր մոլորեալ եղբայրներէն
հեռանալ, որ այսպէս կը դրէ «Զեզ կը պատուիրեմ եղ-
«բայրներ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը, որ եւ
«քաշուիք ամէն եղբօրմէ, որ անկարգութեամբ կը վարուին
«և ոչ թէ այն աւանդութեանը պէս, որ մեզնէ ընդունեցիք,
«Ինչու որ դուք ինքնին գիտէք թէ ի՞նչպէս պարտիք մեզի
«նմանող ըլլալ. քանզի մենք ձեր մէջը անկարգութեամբ
«չը վարուեցանք» ահա այչափ Ս. գրոց վկայութիւններով
հաստատուեցաւ որ սուրբերը յիշելու և նոցա նմանելու
պարտականութիւններ ունիմք, և նոյն պատուիրանաց ու ա-
ւանդութեանց դէմ վարուողներէն պիտի հեռանամք։

Անցեալ շաբթու մեր բաժանեալ եղբարց Ս-եռաբանական
ե- բողոքական անուանց արժանաւորութիւն և յարմարու-
թիւն չունենալնին Ս. գրոց վկայութեամբ հաստատեցինք վեր-
ջը, այսօր ալ պատմական վկայութեամբ հաստատեմք որ
դոքա կատարեալ Լուտերական ալ չեն. քանզի Լուտեր
սրբոց պատկերները կը յարգէր, և այդ մասին ալ շատ վի-
ճաբանութիւններ բրած է, վեշտասաներորդ դարու պատ-
մութեան 2 րդ. հատորին և 165 րդ երեսին մէջ կը կարդամք
որ Իէնա քաղաքի (Գրլամանիոյ ճամբուն վրայ է) ժողովուր-

դը եկեղեցւոյն դէմ ապստամբելով ամէն անկարգութիւնք
գործեցին։ «Ուստի Լուտեր 1524 թուականին և օգոստոս
«23 ին նոյն քաղաքը մոնելէն վերջը, հետեւեալ առաւօ-
«տեան եօթներորդ ժամուն ամպիոնը եկաւ և ժամ ու
«կէս քարոզ տուաւ բազմաթիւ ժողովրդեան առջեւը՝ ա-
«նոնց կոչը նախանձաւորութեանը, ապստամբութեանը.
«պապիզմները էոորբենոռ ու իրական ներկայութիւնը անարգել-
«նուն վրայ, մանաւանդ Գրլամանիոյ փոփոխութեանը դէմ
«շատ կծու խօսքեր ըրուցեց»։

Ուրեմն ասոնք Լուտերական ալ չեն. վասն զի Լուտեր
ոչ թէ սրբոց պատկերները կը յարգէր՝ այլ և Քրիստոսի հա-
ղորդութեան խորհրդին վրայ այնպէս դեղեցիկ կերպով վի-
ճաբանած և գրած է որ՝ եթէ պատեհութիւն ունենամք
հաղորդութեան խորհրդոյն վրայ խօսելու՝ Լուտերի նոյն
խորհրդոյն վերաբերեալ խօսածներն ալ կը յայտնեմք, Լու-
տեր՝ կուսակրօնութեան մասին միայն ուխտադրուժ դտնը-
ուեցաւ և շատերուն դայթակղութեանն ալ պատճառ ե-
ղաւ որ քիչ մը վերջը նոյն նիւթին վրայ պիտի խօսիմք։

Սրբոց պատկերաց հաղար տարիներէ 'ի վեր եկեղեցի-
ներնուս՝ մէջ ըլլալը տրիշ օրինակաւ մ'ալ յայտնեմ; Քրիս-
տոսի 990 թուականին Սմբատ երկրորդի եղբայրը Գագիկ
Ս. որ «Սրբայից Սրբայ տիտղոսը ստացաւ. և բարեպաշ-
տութեան մասին ալ նախորդները դերազանցեց. երբոր իւր
դահը նստաւ, Անի մայրաքաղաքին մէջ Գրիգոր Լուսա-
ւորչի պատուոյն մեծ ու փառաւոր եկեղեցի մը չինել տուաւ
և Սմբատ թագաւորին սկսած Մայր եկեղեցին ալ իւր ծախ
քովը վերջացուց և զանազան ընծաներով զարդարեց, շատ
անգամ եկեղեցական ժամերգութեան ներկայ կ'դտնուէր, և
պաշտօնեէից հետ աստուածային պաշտօն կ'կատարէր, Գա-
գիկին չինել տուած փառաւոր եկեղեցւոյն տարս անկիւնները

չորս աւետարանչաց պատկերները խիստ մեծ դիրքով նը-
կարուած են՝ որ ես ականատես եղած եմ, և ինձպէս շա-
տերը ալ տեսած կ'լինին, որ մինչև ցայսօր անջնջելի կերպով կմնան։ այնպէս ալ Հայաստանի ուրիշ հնութիւնները տեսնողը՝ պատկերները հոն դարերէ 'ի վեր եկեղեցիներու յարդած ըլլալը պիտի վկայէ, եւ շատ հաւանական է որ Քրիստոսի ժամանակակից մեր Սրբոյ Թադեւսին Քրիստոսէն ընդունած եւ դատաւորի վրայ նկարուած պատկերին քաջալերութեամբ Սրբոյ պատկերները դրոշմած են եկեղեցեաց մէջ, կ'ըլլան որ փոքր 'ի շատէ հաւկայաք որ պատկերները ի՞նչ նպատակաւ դրուած են եկեղեցւոյ մէջ, եւ թէ ընաւ կռապաշտութիւն եւ պատկերապաշտութիւն չիկայ։ եւ այդ խօսքը չարամտաց եւ անկրօն անձանց ձրի զրպարտութիւն է. որպէս զի ատով պարզամիտ ժողովուրդը կարողանան որսալ, բայց զարմանալն այն է թէ 1856 թուականին տպուած «Հանուրդ Քրիստոնեական Աստուածաբանութեան» անուն գիրքին 42 երդ. երեսին եւ առաջին տունակին մէջ կ ասեն թէ՝ «կրնայ ըլլալ որ սրբոյ ապօթք մատուցանել, սակայն 'ի վերջոյ իր յոյսը միայն Քրիստոսի վրայ ըլլայ, հոգեկորոյս մեղք չէ»։ Ուրեմն ինչո՞ւ իրար կանգնին այդ պարոնները Ն- Եկեղեցի չէն դար. քանի որ հոգեկորոյս մեղք չ'ըլլալը՝ խոստովանել ու հրատարակելէն վերջը՝ եկեղեցի չիգալը խղճի գործ չիպիտի լինի, այլ ուրիշ դաղտնի նպատակ մը պիտի լինի, եւ այն է անձնական շահը, վասն զի, ինչպէս կարելի է հաւատալ որ սրբոյ պատկերները խիղճերնուն դիպի, բայց միլիոնաւոր եղբայրներէ բաժնուելով՝ անոնց զրպարտելը և ընդհանուր եկեղեցին վատահամբաւելը խիղճերնուն չդիպի. ասի այնպիսի աչքակապութիւն է որ՝ իրենցմէ աւելի ռամիկները կրնան խաբուիլ։ Եթէ այդ պարոնները իրօք հաւատք ու-

նին, կամ հաւատացեալ ըլլալ կուզին, թող լաւ լսեն Զօ-
դոս առաքելոյն խօսքերը որ Հռովմայեցւոց կ'ըզրէ. 3 երդ.
Գլ. 31 համարին մէջ, «Ուստի մենք հաւատքով օրէնքը կը
«խափանե՞մք, քաւ լիցի, հապա օրէնքը կը հաստատե՞մք»
Եւ ո՞ր Քրիստոնեայն է այն, որ Քրիստոսի սուրբերը որ-
համարելով՝ Քրիստոսի վրայ հաւատք ունեցած ըլլայ, չէ՞
որ սրբոց նահատակութեամբը ու մարտիրոսութեամբը
Քրիստոսի Աստուածութիւնը հաստատեցաւ հանուր աշխարհի, եթէ սուրբերը չընդունիմք Քրիստոս ի՞նչպէս կրնամք
ճանչնալ և ո՞րու վկայութիւնը մէջ բերեմք, երբոր Քրիստոսի
դործքերը պատմենք, դոքա կըսեն թէ՝ «մեր ալ սրբոց պէս
նիւթական ըլլար» 'ի զուր տեղը իր եկեղեցիին բաժնուսոյ եւ իր
բարի եղբայրները ատողը, միով բանիւ իր կամքին ու անձնական շահուն դերի ըլլողը, ի՞նչպէս կրնայ իր կեանքն ու
արիւնը զոհել. քանզի ճշմարիտ Քրիստոնէին առաջին Սրբութիւնը, անկեղծ սէր ունենալով՝ իր եղբայրը փրկելն է
երբոր այն սէրը չունին, ո՛չ իրենց եղբարց եւ ոչ ալ իրենց ծնած ու մնած եկեղեցւոյն վրայ, ուրեմն ի՞նչպէս
կրնան սուրբ ըլլալ. և ինչպէս կրնան Քրիստոնեայ համարուիլ, Քրիստոնեայ չեն համարուիլ՝ այն պատճառաւ՝ որ
իրենց եկեղեցւոյ փրկութիւնը կուրանան, և օտար աղանդի եւ օտար յարկի մէջ մտնելով փրկութիւն կուզեն դտնել. եթէ կատարեալ հաւատք ունին. իրենց եկեղեցւոյ մէջ
ալ կրնան փրկուիլ, ուրեմն հաւատքը մարդս չպիտի փրկէ
Լուտերական յա՞րկը եւ չէ՞նքը պիտի փրկէ, ծայրահեղ
ապիտութիւն։

Եթէ կաթողիկէ եկեղեցւոյ մէջ դրուած Սրբոց պատկերները աւելորդապաշտութիւն է, Լուտերական յարկին
մէջ զետեղուած երդեհոնը բարեպաշտութի՞ւն է։

Մանաւանդ որ ժողովարանին դուռը պահապան մը

կայնեցնելով ժողովուրդը և անմեղ մանկտիքը ներս կ'հրա-
« ուիրեն, ասելով թէ՝ « ովոր տառ անդամ ծողբերան բաց՝ հի Ս.տա-
« ուածաշունչ ֆէրտ պէտի տամ անոր» Եւ մեկ մեկ Նիշեր կուտան
ձեռուրնին, որպէս զի 20 թիւը լրանալը գիտնան եւ այն-
պէս գիրքը ընծայեն։

Կ'հարցնեմ այդ պարոններուն թէ՝ այդ տեսակ հրա-
ւէրը և ձրի գիրք տալը ի՞նչ նշանակութիւն ունի, և Ս.
գրոց ո՞ր կողմը գրուած է արդեօք. և նոցա այս հակաք-
րիստոնէական ընթացքը ժողովուրդը գայթակղեցնել և
Քրիստոնեայ ժողովրդոց մէջ որոմն ցանել չէ՞։ Ս.յս նիւ-
թին վրայ խօսքերնիս վերջացնելով՝ Կաթուղիկէ եկեղեցւոյ
ընդունած կուսակրօնութեան վրայ խօսիմք։

ԿՈՒՍԱԿՐՕՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Յայտնի է որ եկեղեցիներս հաղարաւոր տարիներէ ի
վեր Ս. Գրոց ամեն պատուէրներն ու աւանդութիւնները
հաստատ պահելու միշտ ջանք ըրած է, և այսուհետեւ ալ
նոյն աւանդութիւնները անվրէպ կատարելու որբաղան պար-
տականութիւնը պիտի ճանչնայ, և ըստ այնմ իւր սերնդոց
պիտի աւանդէ. ինչպէս որ եկեղեցւոյ Ս. Հարք ամենայն
հաւատարմութեամբ մինչեւ մեզի հասուցին. և մենք ա-
ռանց ո՛ և է փոփոխութեան յանձնելու եմք ապագայ սե-
րընդոց՝ որպէս զի անիծից ենթակայ չլինիմք։

Կուսակրօնութիւնը կրօնի էական մասերէն չլինելով՝
մարդոյս ազատ կամքէն կախուած օրէնք մ' է, որն որ մար-
դիկ իրենց կամեցողութեամբը և ուխտիւ այդ օրէնքը կրն-
դունին և այդ լուծին ներքեւ կը մտնեն, հարկաւ Աստու-
ծոյ հաճելի լինելու նպատակաւ։

Ուստի կուսակրօնութեան մասին ընդարձակ դաղափարը

մը տալու համար՝ փարիսեցւոց զՔրիստոս փորձելու համար
ըրած հարցումներնին նախ յառաջ բերեմք, և յետոյ Քրի-
ստոսի տուած պատասխաններուն վրայ մեր խօսակցու-
թիւնը հիմնեմք։

(Մատթ. 19 գլ. 3 գլ. համար) Փարիսեցիները Յիսու-
« սին մօտենալով զանիկայ կը փորձէին. և կըսէին թէ, որ-
« ժա՞ն է որ մարդ մը իւր կինը արձակէ ամեն պատճառի
« համար, Յիսուս ալ պատասխան տուաւ ու անոնց ըսաւ,
« չէ՞ք կարդացեր, թէ այն որ սկիզբէն ստեղծեց, արու և էգ
« ստեղծեց անոնք, և ըսաւ, Ասոր համար մարդ իւր հայ-
« ը ու մայրը պիտի ձդէ և իւր կնկանը պիտի յարի, և
« երկուքը մէկ մարմին պիտի լինին.....։ Սակայն կըսեմ
« ձեզի, ո՛վ որ առանց պոռնկութեան պատճառի իւր կինը
« արձակէ, և ուրիշ մը առնէ, շնութիւն կընէ, և ո՛վ որ
« արձակուածը առնէ՝ շնութիւն արած կը լինի, Աշակերտ-
« ները ասացին իրեն, թէ որ այդպէս բան կայ էրկան ու
« կնկան մէջ տեղը; չամուսնանալը լաւ է. և Յիսուս անոնց
« ըսաւ, ամենը կարող չեն այդ բանին. հապա անոնք, ո-
« րոնց տրուած է, ինչու որ կան ներքինիներ, որ իրենց
« մօրը որովայնէն այնպէս ծնան, և կան ներքինիներ, որ
« մարդոցմէ ներքինի եղան. և կան ներքինիներ, որ ինք-
« զինքնին ներքինի ըրին Աստուծոյ արքայութեանը համար;
« ո՛վ որ կրնայ տանիլ, թող տանի,,։

Քրիստոսի այս խօսակցութեանց մէջ չորս նշանաւոր
կէտեր կան. առաջինը՝ ամենը այդ բանին կարող չըլլալնին, ուրեմն
այդ բանին կարողութիւն ունեցող մարդիկներ ալ կան եղեր
թէ և շատ քիչ։ Երկրորդ. որոյ տրուած է. ուրեմն այդ մա-
սին՝ Աստուածային կամ դերբնական շնորհք մը և ձիրք մը
կայ եղեր մարդոյս այն ճիւղին տրուած։ Երրորդ. Աստու-
ծոյ արքայութեան համար ինքզինքնին ներքինի ընողներ կան եւ կլինի և

գրեր։ Զարմանալի՝ թէ որ էնոյ գանձ՝ Բոլորանձ, որ Աստուածային
այն ձիրքը ունեցող եւ այդ լուծը կամաւ առնողը ընութեան
օրէնքին դէմ գործած չըլլար եղեր։ Որովհետեւ մեր եկեղեցւոյ
հակառակորդաց ցոյց տուած երկու պատճառներուն առա-
ջինը այս է թէ՝ չ'ամուսնացողը ընութեան օրէնքին դէմ
գործած կ'ըլլայ։ Այդ քանի որ ընութեան հեղինակը
Քրիստոս ինքն էր, եւ այն խօսքերը ընողն ալ նոյն իսկ
Քրիստոսն էր, որ եւ ընութեան օրէնքին հակառակ կար-
ծած կեանքին Աստուածային շնորհն է. որ իրենց որուած
չ'ըլլալուն եւ իրենց խելքին՝ նժարը չ'սեղմելուն համար ընու-
թեան հակառակ կ'ուզեն. եւ առով Քրիստոսի խօսքերը
արհամարած կ'ըլլան, բայց իրենք տեղեակ չեն։

Եւ հիմա քննենք թէ, Պօղոս առաքեալը ի՞նչ կըսէ.
«Բանդի կուզէի որ ամէն մարդիկ ինձ պէս ըլլային. բայց
«ամէն մէկը իւր պարգեւը ունի Աստուծմէ. մէկը այսպէս
«և միւսը այնպէս. բայց չամուսնացածներուն և որբևայ-
«րիներուն կըսեմ. լաւ է անոնց՝ թէ որ ինձ պէս կենան.
«բայց թէ որ ժուժկալութիւն չունին թո՛ղ ամուսնանան,
«ինչու որ լաւ է ամուսնանալը քան թէ բորբոքիլը....։
«Բայց ես կուզեմ որ դուք անհոգ ըլլաք, վասն զի չա-
«մուսնացած մարդը Տէրոջը բաները կը հոգայ, թէ ինչ-
«պէս Տէրոջը հաճելի ըլլայ. իսկ ամուսնացածը աշխարհիս
«բաները կը հոգայ. թէ ի՞նչպէս իւր կնոջը հաճելի ըլլայ.
«և ամուսնացած կնիկը և կոյսը կը տարբերին իրարմէ.
«ինչ- որ կոյսը Տէրոջը բաները կը հոգայ, որ ի՞նչ սուրբ ըլլայ հոգւով-
«և մարմնով, իսկ ամուսնացած կնիկը աշխարհիս բաները կը
«հոգայ թէ ի՞նչպէս իւր երկանը հաճելի ըլլայ...։



ԼՍԱՐԱՆ

ՏԵՏՐ ԵՐՐՈՐԴ

—

«Զլինի որ մեկը քու մանկութիւնդ
«անարգէ, բայց դու օրինակ եղիր հաւա-
«տացեալներուն խօսքով, վարմունքով,
«սիրով, հաւատքով, և մաքրութեամբ»։
(Ս. Տիմ. Դ. Գլ. 12.)

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. Գ. ԹՕԶԼԵԱՆՑ

ՀԱՅԿԱՆ ՍՍՀ ԳԱ
Գրաբ. Ինստիտուտ
ՀՍՍՌ-ԱԳԱ
Գրադարան
17501-58

»Բայց այն որ ի՞նչ որոշն մեջ հասարակ կը կենայ, ե՞ւ ի՞նչ վրայ հարկ մը »ալ չէին հարց ի՞նչ կամէին վրայ իշխանութիւն ունի, ե՞ւ ի՞նչ որոշն մեջ »այսպէս որոշեր է, որ ի՞նչ կոտորածիւնը պահէ, լա՞ կընէ . . . Բայց իմ դատումիս նայելով ասելի երանելի է թէ որ այնպէս կենայ. և կարծեմ թէ ես ալ Աստուծոյ հոգին ունիմ։ (Ս. Կարնեթ. Է. Գլ. ամբողջ կարդա՛)—Ընութեան օրէնքին դէմ է — ըսող և հակառակող պարոններն՝ կերեւի որ Պօղոս Առաքելոյն այս խօսքերը չեն կարդացեր՝ կամ չեն հասկացեր. որովհետև ինչպէս Քրիստոս՝ այնպէս ալ առաքեալը կուսութիւնը ընդհանուրի նկատմամբ չէ հրամայած, այլ պարզ կերպով Առաքեալը բացատրած է իւր կամքն ու միտքը. մեր կուսակրօնութեան ուխտող հայրերն ալ Առաքելոյն հրամայած այն յատկութիւններն հարկաւ ունին. այն է իրենց կամաց վրայ ամուսնութեան հարկ մը չեն տեսներ. և իրենց սրտին մէջ չամուսնանալ որոշած են. և այդ ուխտը ընող հայրերն ալ բնականաբար Աստուծոյ գործերը պիտի հոգան և նորա ժողովրդեանը խնամք պիտի տանին, քանի որ ընտանեաց և որդւոց հոգ և գբաղմունք չունին։

Բայց մենք ինչո՞ւ չյիշենք այն հաղարաւոր ամուրի եւրիտասարդներն ու չափահասները. ուրեմն ինչո՞ւ չեն յարդեր դոքա ընութեան օրէնքը, և կրնանք ըսել թէ՝ դոյա բոլորն ալ իրենց հաճոյքը և ցանկութիւնը կը լրացնեն. եթէ այն ամուրեաց ոմանց մասին անձնիշխանութիւնն ու ժուժկալութիւնը պիտի ընդունիք, ուրեմն կուսակրօնութեան ուխտեալ Ս. հարց համար Աստուածային այն ճիրքն ու շնորհքը ինչո՞ւ ղանամք և ինչո՞ւ անկարելի սեպեմք, մինչդեռ անցեալոյն և թէ ներկայիս մէջ հաղարաւոր փորձեր ունիմք մեր առջեւ։

Ընութեան օրէնքը իւր ասպիճանը ունի. կան այնպիսի անդիմադրելի օրէնքներ, որ մարդս պարտաւորեալ է հնա-

զանդելու, զոր օրինակ ուտել, ծարաւը զովացնել, մարմինը հանգստացընել, կարիք վճարել և այլն և այլն, ոչ թէ այնպիսի պէտքեր են որ բացառութիւն չեն ընդունիր, և թէ անկարելի է սոցա դէմ մաքառիլը. բայց ամուսնութիւնը բնութեան նոյն օրինաց պէս չէ՝, և կրնայ մարդս ամուրի կեանք վարել առանց պէտք ունեցութիւն զգալու, ոմանք ներքին կաղմուածոյ և գործարանաց անզօրութենէն, և ոմանք իրենց ուխտն ու որոշումը հաստատ պահելով կը ժուժկալեն մինչև այն կէտը, որ արդէն բնութիւնը չի կրնար իւր աղդեցութիւնը բանեցնել։

Ամուսնութիւնը բնութեան օրէնքին զօրաւոր մասը չըլլալը ուրիշ օրինակաւ մը ալ ապացուցանեմ. Հայաստանի և Ասիայի շատ կողմերն՝ թէ՝ Հայոց և թէ՝ այլազգաց մէջ 25 և 30 տարեկան բաղմաթիւ ամուրի երիտասարդներ կան, որ ամուսնական հաճոյք և զգացում չունին, և երբոր իրենց ծնողաց և ազգականաց թախանձանօք և ստիպմամբը ամուսնանան՝ հաղիւ կրնան կոր բնական պարտականութիւններն կատարել, այն ալ ծերունեաց և քահանայից խրատիւք և յորդորանօք, վասն դի նախ՝ հաճոյք չեն զգար. եկեղեցիս մեծ մեղք և ամօթ կը համարին, և այնպիսի երիտասարդներ որ՝ բնական կարմրութիւնը դէմքերնուն վրայ և Հայկայ առոյգութիւնը անձերնուն վրայ կը փայլի, բնութեան օրէնքին հակառակ է ըսող և յամառող պարոնները՝ խնդիրը միայն իրենց անձին և զգացմանցը համեմատ թող չդատեն, այլ դրուածոց և ժողովուրդեան ընթացից և քաղաքական կենաց վրայ ալ պարտին դիտողութիւն ընել և հեռատեսութիւն ունենալ։ Ս. Գրոց մէկ քանի օրինակները ցոյց տուինք միւս մէկ օրինակն ալ յայտնեմ, Քրիստոս ըսաւ որ, «եթէ մէկը ինձ կուգայ, և չատեր իւր հայրը և մայրը ե-կինը և զաւակները, և եղբայրները, և քոյրերը, նաև իւր կեանքն ալ, չի կրնար իմ աշակերտս ըլլալ»։ (Ղուկ. ԺԴ. ԳԼ. 26 համար) մի՞թէ Քրիստոս չէր գիտեր որ կին ունենալը բնութեան օրինաց պարտականութիւնն է, ինչո՞ւ ուրեմն Քրիստոս ատել հրամայեց. որովհետև կարելի բան էր և կարելի է առանց կնոջ ապրիլը՝ այդ պատճառաւ հրամայեց, մեր կուսակրօնութեան ուխտող հայրերնիս ալ յիշեալ խօսքերուն համեմատ և նորա ճշմարիտ աշակերտ լինելու յուսով և նպատակաւ, աշխարհէս հրաժարուած, և միայն Աստուածահաճոյ գործքերով կը զբաղին. և եթէ հարկը ստիպէ Քրիստոսի համար կեանքերնին ալ կը զոհեն. ինչպէս որ զոհեցին իրենց նախորդները։ Քիչ մը յառաջ ասացինք որ ժողովրդեան ընթացից և քաղաքական կեանքի վրայ ալ պէտք է հեռատեսութիւն ունենալ. որովհետև մենք այսպէս կը կարծեմք թէ՝ բոլոր դաւառացւոց և գիւղացւոց վիճակն ու դրութիւնը մեր քաղաքական վաւաշտ, զեղխ ու ցոփակեաց կեանքին կը նմանին, բայց ներուի ինձ ասելու որ մեր ներկայ քաղաքական կենաց դրութիւնը աւելի անասնական է՝ քան թէ բարոյական. մենք մեր կամաց ու կրից գերի ըլլալով՝ համբերութիւնն ու ժուժկալութիւնը բնութեան հակառակ կը կարծեմք, այն ալ մեր առած ուսման և դաստիարակութեան թերութեանց պատճառաւ, բայց եթէ դաւառացւոց և գիւղացւոց ընտանեկան վիճակը քննենք, պիտի տեսնեմք որ բարոյականութիւնը և Հայկական համեստութիւնը իրենց վարուց ու գործոց մէջ իբրեւ անդամանդ կը փայլի, որն որ մենք լուսաւորեալ քաղաքացիքս դժբաղդաբար զուրկ մնացեր եմք, կը տեսնէք որ իմ այս դիտողութիւններս Լուսերական Հայոց կուսակրօնութիւնը մերժենուն միայն չվերաբերիր՝ այլ այն անձանց և այն Լուսաւորչականաց՝ զոր եկեղեցւոյ արտաքին թշնամեաց թմբուկը զարնելով՝ եկեղեցին հարուածել կուզեն, և ազդասիրութիւն

քարոզելով Ս.ղղին բարոյական կապերը կը լուծեն և հիմունքը քանդելու կաշխատին։

Ս.ըդ՝ խօսիմք մենք հիմայ եկեղեցւոյ թշնամեաց երկրորդ առարկութեան վերայ, որ կը պնդեն թէ՝ «Եպիսկոպոսդերը պարտին մի՛ մի՛ անել» և այս խօսքերնուն վկայութիւն կը բերեն Տիմոթէոսին դրուած առաջին թղթոյն և երրորդ գլխոյն մէկ վկայութիւնը։

«Թէ որ մէկը եպիսկոպոսութեան կը ցանկայ՝ լաւ գործի կը ցանկայ, ուստի պէտք է եպիսկոպոսին անարատ ըլլալ և մի կնկան էրիկ, զգաստ, խոհեմ, պարկեշտ. հիւրասէր, ուսուցիչ և այլն և այլն»։ Ս.հա Պօղոս առաքելոյն գրած այս խօսքերը իբրև վահան ճշմարտութեան ցոյց կըտան մեզի, իբրև թէ մեր եկեղեցւոյ Ս. Հայրք Առաքելոյն այս խօսքերը սխալ ըմբռնած և կամ նոյն գրուածոյ միտքը չհասկցած ըլլան։ Առաքելոյն խօսքերէն յայտնի կը տեսնուի որ այն ժամանակները հեթանոս ժողովուրդները մի քանի կնկան տէր էին, և եպիսկոպոս ըլլալու ալիւտիւք ունէին, ուստի թէ նոցա սրտերուն մէջն արմատացած հեթանոսութիւնը խլել և թէ կիներնին թողլատալ՝ ասի գործուար էր և չէր կրնար ըլլալ. և այդ պատճառաւ հրամայեց որ դոնէ մէկ կնիկ ունենան որպէս զի կարող ըլլան թէ՝ իրենց տրդիքը և թէ՝ Աստուծոյ ժողովուրդը կառավարելու, որովհետև այն խօսքերէն քիչ մը վերջը կըսէ թէ՝ «թէ որ մէկը իր տանը վերակացութիւն ընելը չի գիտնայ, ինչպէս Աստուծոյ եկեղեցւոյն հոգաբարձու պիտի ըլլայ» ըսելէ Եպիսկոպոսութեան ցանկացող այն մարդիկները բաղմակին ըլլալնուն համար իրենց տունները կառավարելու անկարող էին, հետեւարար բաղմակնութեան մէջ շատ եղծումներ ըլլալով անարատութիւն չէր կրնար ըլլար, ուստի ապօրինութեան և անկարգութեան առաջն առնելու համար մի կին

միայն ունենալու հրաման տուաւ։

Անարատ ըլլալու և մէկ կնիկ ունեցողները Եպիսկոպոս ըլլալու պատուերը Տիմոթէոսին ալ գրեց, «Ես քեզ Երեմէ թողուցի որ՝ ինչ պակաս բան որ կայ կարգի դնես, և ամէն քաղաքի մէջ երէցներ կարգես, ինչպէս որ ես քեզ պատուիրեցի, թէ որ մէկը անարատ ըլլայ՝ մէկ կնկան մի էրիկ, հաւատացեալ զաւակներ ունենայ, որ անառակութեան համար մեղադրեալ կամ անհնազանդ չըլլան, ինչու որ եպիսկոպոսին պէտք է անարատ ըլլալ Աստուծոյ տնտեսին պէս, ո՛չ յանդուգն, ո՛չ բարկացող, ո՛չ գինեմոլ, ո՛չ հարկանող, ո՛չ անարդ շահախնդրութեան ետեւէ եղող, հապա հիւրասէր, բարեսէր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ» և այլն և այլն։ (Տիտոս Ա. Գ.Լ. 5—9)։

Ս.հա Պօղոս Առաքեալը այս գրուածովը աւելի բացատրեց անարատութեան պարտականութիւնը. մեր հակառակորդները պարտականութիւնը կին առնելուն կը վերաբերեն, բայց սակայն խիստ կը սխալին, վասն զի Յակոբոս առաքեալն ալ գրած է կրօնաւորութեան վերայ, բայց չէ յիշած թէ կրօնաւորները պարտին կին ունենալ։ Ս.հաւասիկ, «թէ որ մէկը կրօնաւոր ըլլալ ուզէ, եւ իւր լեզուին սանձ չը դնէ, հապա իւր սիրտը կը խաբէ, այնպիսոյն կրօնաւորութիւնը ընդունայն է, Աստուծոյ եւ հօրը քով մաքուր եւ անարատ կրօնաւորութիւնը այս է, որբերուն եւ որբեւայրիներուն տես երթալ իւրեանց նեղութեան ժամանակ եւ անձը անարատ պահել աշխարհէն»։

Ս.յս խօսքերուն մէջ եղած կրօնաւոր բառը խօսքերը ծանծաղելով՝ այսպէս կը թարգմանէն, «Ի՞նչ որ տեսը կրօնաւոր կը սեպէ»։

Յակոբոս առաքելոյն խօսքերէն ալ հասկցուեցաւ որ հոգեւորականաց վրայ պարտականութիւն չիկայ ամուսնա-

նալու, այլ անարատութիւն եւ սրբութիւն կը հրամայուի եւ նոյնը կը պահանջուի հոգեւորականներէն, եթէ իրօք Եպիսկոպոսները կին առնելու պարտականութիւն ունէին, և անհրաժեշտ պէտք էր, ուրեմն Պօղոս առաքեալինչո՞ւ չամուսնացաւ, նոյնպէս ուրիշ առաքեալներ որ Պօղոսի պէս եպիսկոպոս ըլլալով շատ եկեղեցիներու ալ կը հրամայէին, ինչո՞ւ չամուսնացան, եւ Պետրոսի, Յակոբոսի, Յովհաննէսի ընդհանրական թղթոց մէջ այդ պարտականութիւնը ինչո՞ւ չէ յիշուած, ուրեմն այդ երանաշնորհ առաքեալները երկուսեսակ մեղք գործեցին, թէ բնական օրէնքը չը կատարելով, եւ թէ չամուսնանալով՝ եկեղեցիները չկրցան կառավարել եւ իրենց խրատներուն հակառակ վարուեցան, մանաւանդ Պօղոս առաքեալը որ երկու անգամ պատուիրած ու գրած է ըստ նոցա հակացողութեան։

Բայց ո՛չ, եղբայրներս, մեր եկեղեցական Ս. Հարք ուշի ուշով կարդացած են Ս. գիրքերը եւ այնպէս բարեկարգած են եկեղեցին. մանաւանդ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, որ Քրիստոսէն 270 տարի վերջը եկաւ. ըսելէ Ս. առաքելոց բարեկարգութեանց և Ս. աւանդութեանց լաւ տեղեկութիւն եւ հմտութիւն ունէր. եւ Քրիստոնէութեան վրայ շատ սէր ունէր, միթէ՞ ինքը չէր գիտեր որ եպիսկոպոսին մը պէտք է, ինչո՞ւ ուրեմն իւր կինը Կեսարիայէն բերել չը տուաւ, եւ առանց կնոջ ապրելով՝ Հայաստան աշխարհի ժողովուրդը լուսաւորեց Քրիստոնէութեամբ. եւ իւր կեանքը սրբութեամբ անցնելով ճգնութեամբ վերջացուց, այն ալ պարտաւորնոց դանուեցաւ իւր կոչման եւ իւր պաշտօնին։

Ուրեմն աւելորդ է յամառիլն, ու հակառակիլը թէ՝ —Եպիսկոպոսները պէտք է կին ունենան—, անոնք որ կը հակառակին կամ Ս. Գիրքերէն տեղեկութիւն չունին, եւ

կամ այլ նպատակ մը ունին։ Վասն զի քանի որ Քրիստոս հաստատեց ,, որոնց որոշած է ,, ըսելով եւ հրամայեց ,, ՝Ի կրնայ դանել ընդ դանի ,, ըսելով, և քանի որ Պօղոս առաքեալն ալ Կուսակրօնութիւնը յարդեց իւր գործքով ու գրուածներով. ուստի Եկեղեցւոյ այս օրէնքին դէմ բարբանջող ու թշնամանողը՝ կատարեալ թշնամի է եկեղեցւոյ օրինաց, հետեւաբար և աղդին. վասն զի թէ՛ կրօնի և թէ՛ աւանդութեանց փոքրիկ մէկ նշանախեցին դիպողը և հակառակ վարուողը ընդհանուր աղդին թշնամութիւն ըրած կըլլայ և թշնամի է թէ՛ դիտութեամբ և թէ անդիտութեամբ, մանաւանդ որ մեր եկեղեցին կուսակրօն ըլլալու չատիպեր դմարդ, այլ միայն իրենց կամաւը և իրենց ցանկութեամբը կուխտեն ամէն անոնք, և եկեղեցին կընդունի, եւ պաշտօնեայ կը կարդէ Քրիստոսի հօտին, զարմանալին այն է որ Ս. դիրքին այն վկայութիւնը ցոյց տուող քարոզչաց մէջ բազմաթիւ մեսիոնար եպիսկոպոսներ կան, որ ամուսին չունին և նոյն պաշտօնին մէջ ամուրի կեանք կը վարեն։

Կուսութիւնը Աստուածահաճոյ գործ ըլլալը Յովհաննու Յայտնութեան մէջ ալ կը կարդամք այսպէս, " Եւ նոր ,, երդ կերդէին աթոռին առջեւը. եւ չորս կենդանիներուն ,, ու երէցներուն առջեւը. և մէկը չէր կրնար այն երդը սովրիլ, բաց 'ի այն հարիւր քառասուն և չորս հազարէն, որոնք երկրէն փրկուած էին, սոքա անոնք են, որ կանանց հետ ,, չը խառնակեցան. ԿՈՒՍ ԷՆ. սոքա գառնուկին եւեւէն ,, կերթան՝ ուր որ այն երթայ. սոքա մարդոց մէջէն փրկուեցան. Աստուծոյ և Գառնուկին երախայրի ըլլալու, ,, և նոցա բերանը սուտ չդտնուեցաւ, ինչու որ անբիծ են,,։ (Յայտ. ԺԴ. 3—5 համար)։

Ս. յս վկայութիւնը եթէ Լուսաւորական քարոզչաց հարցընէք, պիտի տեսնէք որ իւրաքանչիւր քարոզիչք զատ զատ

կը մեկնեն Յայտնութեան այս խօսքերը. և մէկը միւսին չը յարմարիր, վասն զի քանի որ կուսակրօնութիւնը չեն ընդունիր և պիտի չընդունին. Ի հարկէ ամէն տեսակ ձեռնածուաց միջոցներ պիտի գործածեն. որպէս զի ջրէն այն ամէն վկայութիւնները և իրենց թիւը սկզբունքը յառաջատանին, եթէ ցաւալի բան մը կայ՝ այն ալ այս է, որ մեր դրիչներէն ոմանք օտար թշնամեաց կը ձայնակցին և եկեղեցւոյ հնաւանդ սովորութիւնը բառնալու կը նկրտին. թէ եւ զուր չան եւ անմիտ հնարեւուն ... : Ո՞վ կտիպէ ժողովուրդեան որ կուսակրօն ըլլան, եւ ո՞վ կը բառնաբարէ անոնց որ չամուսնանան, քանի որ այն մարդիկը խնդահաս ու չափահաս ըլլալով՝ եւ աշխարհիս ամէն վայելչութեանց եւ ձախորդութեանց տեղեակ. ուստի իրենց յօժարութեամբը, ցանկութեամբը եւ խնդրանօքը կը դիմեն այն փարախին մէջ իրենց նախնեաց նման փառք և պսակ ստանալու համար դոցա խնդիրը եկեղեցին կրնա՞յ մերժեր : Երանի՜ այն հոգեւորականաց որ իրենց Սրբազան պաշտօնը անթերի կատարելով՝ ազգին ցաւերուն դեղ եւ դարման կը լինին, վասն զի որ եւ իցէ ազգի եւ ժողովուրդեան բարոյական կեանքը նոյն ազգի հոգեւորականներէն կախումն ունի . . . . :

Օտարացեալ եղբայրները՝ մեր եկեղեցւոյ վրայ զբաղարտութիւն մ՚ալ կը դնեն, ասելով թէ՝ —Յեր եկեղեցին ամուսնանալէ կարելի՞ է— եւ այս շաղակրատութեան վկայութիւն կը բերեն Պօղոս Առաքելոյն Տիմոթէոսին գրած Առաջին Թղթոյն Դ. գլուխը, որ կը գրէ, „Բայց Հոգին „յայտնապէս կըսէ թէ վերջին ժամանակները մէկ քանիներ „հաւատքէ պիտի ապստամբին. եւ մոլորեցուցիչ ոգիներու „եւ դիւաց ուսմունքներու ուշադրութիւն պիտի տան, „որոնց խղճմտանքը խանձուած է, որոնք ամուսնանալէ „պիտի արգիլեն„ :

Ամուսնութիւնը ամէն ազգի եւ ամէն կրօնքի մէջ ընդունուած խորհուրդ մինչ որ առանձին արարողութեամբ կը կատարուի. եւ առանց արարողութեան կատարուածը օրինաւոր ամուսնութիւն չհամարուելով՝ ապօրինի համարուած եւ անվաւեր ընդունուած է ամէն ազգերէ, այս ճշմարտութիւնը ո՛չ ոք կրնայ ուրանալ:

Հիմա քննենք թէ՝ Պօղոս առաքելոյն հոգւոյ յայտնութեամբ գրածը՝ մեր եկեղեցւո՞ն կը վերաբերի թէ՝ Լուտերական ժողովուրդեան, բայց մենք լաւ գիտենք եւ համոզուած ենք որ մեր Եկեղեցին միշտ պատրաստ է յարգելու այն ամուսնութիւնը եւ կը յարգէ, պաշտօնական կերպիւ հրամանագիր կուտայ եկեղեցւոյ երիցանց, որպէս զի եկեղեցւոյ օրինօք պսակադրութիւնը կատարուի, ուրեմն սուտ է եւ զրպարտութիւն է ըսելը թէ՝ —Հայաստանեայց Եկեղեցի ամուսնանալէ կարելի՞ է, կոյսերը և խուլերը անդամ գիտեն և կը վկայեն որ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ տարին հաղարաւոր օրինաւոր ամուսնութիւնք կը կատարուին :

Եթէ օրինաւոր ամուսնութենէ արգիլող մէկը կայ՝ այն ալ Լուտերն է, և միայն ինք եղաւ սկզբնապատճառ և հակառակ Քրիստոնէութեան ոգւոյն՝ ամբարշտութիւն քարոզողը Որովհետև Լուտեր Ս. գրոց մէկ վկայութիւնը իւր վաւաշտ կամայ գործիք ընելով՝ այսպէս կը բանդագուշէ : „Ընդ„ցող ու պոռնիկ կանայք՝ աւելի հաճելի են Աստուծոյ քան„թէ կոյսերը. որ միանձնութեան համար կրօնքով ուխտ„կընեն, և թէ յղացած կնիկը որչափ ալ ապօրինի վար„ուած լինի իւր յանկողնոյն մէջ կրնայ պարծիլ թէ Ա„ստուծոյ հաճելի է իւր գործը. ինչու որ զաւակ կը բերէ, „որն որ գլխովին Աստուծոյ ձեռագործն է. մանաւանդ „նոյն իսկ Աստուծոյ. „Աճեցէք եւ բազմացարուք„ հրամայած „խօսքերը՝ կնոջ ապօրինի յղութիւնը կարդարացնեն„ :

(Ինճաճի յաղագս ամուսնութեան 3 էջ. հատ. 125 երես),

Լուտերի այս ամբարիշտ քարոզութեանց լինն այլ հոդեւորականներ հետեւեցան 1525 թուականին Սեպտեմբեր օրը, որ ամեն Քրիստոնեայ ազգաց մէջ Յիսուսի Քրիստոսի կամաւոր և փրկարար չարչարանաց և խաչելութեան Յիշատակութիւնը կը լինի, կուսանաց վանք մի կոխելով լինը միանձնուհի առեւանգեցին և լրենց կին ըրին արդէն Լուտեր այդ վանքէն ,, Կատարինէ Պօրէն ,, անուանով կոյս մը առեւանդած և իրեն կին ըրած էր, Լուտերի և իրեն ամբարիշտ արբանեկաց լրութիւնը ժողովուրդեան վրդովումն և դայթակղութիւն պատճառեց, (որոնց պարագլուխն էր Լէոնարդոսն Կոսպէրեան) այդ պատճառաւ ամենքն սկսան նախատել։ Ս.ն տեղ Լուտեր ժողովուրդեան զգացման հակառակ և իբր ներբող այն չարաչար մոլեղնութեան, ինը հոգեւորականաց ճառ մը խօսեցաւ այսպէս։

»Ս.յո՛, զձեզ պիտի նախատեն, բայց ես կըսեմ ձեզի, »որ դուք աւար առուներ եղիք, թէ երկնիկ և թէ բաղ,, դաւոր լինիք, ինչպէս որ Քրիստոս տէրը եղաւ աշխարհի ,, վրայ, երբոր իւր մահուանմէը աշխարհի իշխանը կապեց, ,, և նորա զարդն ու զէնքը յափշտակեց, և իւր յաղթու»թեան փառքին հետ տարաւ, այնպէս ալ դուք նահա,, տակուելով այդպիսի խեղճ կուսանաց հոգիները բռնաւոր »մարդոց խիստ բանտերէն ազատեցիք, ուստի այդ գործը »գատկի աւուր գործելով խիստ լաւ ըրիք, որովհետեւ Տէրը ,, ինքն ալ այն ժամուն առաւ իւր աւարը և կապուած հո,, գիները խաւար բանտէն ազատեց և այլն և այլն ,, ։ (Նատաղիս Ալէքս. եկեղ. Պատմ. Գրդ. հատ. 348 երես)

Ո՞րպիսի ճշմարտութիւն է այն՝ որ իրենց ամօթն ու աւազականքը ծայրահեղ առատաձեռնութեամբ ուրիշի վրայ կը շռայլեն, այս ամբարիշտ քարոզութեանց հետեւողները այն ճիւղը չէ՞ որ Մուրմնեանք կը յիշուին, և շատ կիներ առնելու ալ արտօնութիւն ունին, ե՞ Սեխտրանական են, ճշմարիտ կըսեմ ձեզի, որ Ս. դիրքերը խմբագրող Հայրերը՝ եթէ այսօր կենդանեան յանկարծ, Քրիստոնէութիւնը Քրիստոնեաբաժանել ուզող հերետիկոսաց ոսկորները ջարդ ու փուրդ կը հանեն. և ամեն պատիժ երկինքէն դոցա վերայ կը տեղացնեն, այնպէս որ՝ երկիրս ցորդ տեսած չըլլայ. բայց ցաւելու չէ՝ այնչափ, որովհետեւ Ս. դիրքերը իրենց քմացը համեմատ մեկնելնուն արդիւնքը այնչափ կրնայ ըլլալ, և նորա ամեն խօսքերնուն վկայութիւնը Ս. դիրքերէն կառնեն և իբրեւ թէ նորա համաձայն վարուիլ կը ձեւացնեն. մենք ալ իբրեւ ճշմարիտ Քրիստոնեայ, Եկեղեցւոյ հաւատարմութեամբ ծառայելով՝ Պօղոս առաքելոյն խրատները լաւ ըմբռնելով մեր մտաց ու սրտերուն մէջ՝ և մի՛ դուցէ եկեղեցւոյ թշնամեաց պատիր խօսքերէն հրապուրուելով հոգինիս և ազգութիւննիս կորսնցնենք. քանզի մեր Ս.գրային հաստատութեան հողն ու հիմը կրօնն է, եթէ գըժբաղդաբար կրօնի վառ ու պայծառ ըլլալը աղօտանայ՝ մեր ազգութիւնն ալ անյայտ և անհետեւոյթ կըլլայ, որուն բազմաթիւ փորձերը մեր աչքին առջեւն է այսօր, և սուտ ու խաբերայ է այն անձը որ ազգասիրութիւն քարոզելով կըրօնքը թեթեւցնելու կամ բոլորովին բառնալու կաչխատի. միով բանիւ վատ ու անարդ է այն մարդը, զի առանց կրօնի ազգութիւնը յառաջ տանել կերարէ, մանաւանդ մեզնման ազգի մը համար, որ կրօնը իրեն նեցուկ, թիկունք, յոյս և հոգի է հանդիսացած արդեամբ, բանիւ և գործով։

»Ուստի եղբայրներ հաստատ կեցէք և պինդ բռնեցէք ,, այն աւանդութիւնները որ սովրեցաք, թէ խօսքով և թէ ,, մեր թղթովը ,, ։ (Բ. Թեսաղ. Բ. Գլ. 14 համար)։

Բայց մեր Կարթեցեալ Ս-եղբարձականները Ս.անդուրթիւն չեն ընդունիր, և աւանդութիւնը մերժելով Ս. դրոց ճշմարտութիւնը վտանգի ներքեւ կը ձգեն. երբոր աւանդութիւն չ'ընդունին, այնուհետեւ հին և նոր Կտակարանաց Ս.գիրքը ըլլալնուն ի՞նչ երաշխաւորութիւն պիտի ունենան. ահա՛ դոցա Քրիստոնէութիւնը այնպիսի խախուտ ու խարխուլ հիման վրայ կը կենայ որ "աւազոյ վրայ չինուած տան" կը նմանի, փոքրիկ հով մը բաւական է զայն տապալելու և տապալած իսկ է. ամեն առաքելական եկեղեցիք աւանդութիւնը կ'ընդունին և Ս. գիրքերը և ձեռնադրութեան օրէնքը առաքեալներէն սկսելով յաջորդաբար մեզ հասած ըլլալը կը հաւատան, բայց լուտերականք ասի չ'ընդունելով Ս. դրոց վրայ ի՞նչ հաւատք և ի՞նչ գաղափար ունեցած կ'ըլլան. իրենց գործքերէն կրնանք հասկանալ. ափսո՛ս մեր այն աղգակցաց, որ նոցա կորուսիչ թակարթաց մէջ ընկած են իրենց դիւրախաբութեամբը, և այս պակասութիւնը կարծես թէ բնութիւնը գժբաղդաբար մեր ազգին տուած է. քանդի չեմք տեսներ ուրիշ ազգաց մէջ մեր ազգին նման դիւրաթեք, անհաստատ և դիւրահաւան, Տաճկաստանի Հայոց այդ բնաւորութեանը համար՝ Ռուսաստանի ազգայիններնիս ալ շատ անգամ ցաւ յայտնած են. դպրոցներնուս անկարգութիւնը և անբարեկարգութիւնը պատճառ կը դտնեն Տաճկաստանի Հայոց դիւրաթեքութեան.

Եղբարք իմ, այս կեղտը մեր վրայէն ջնջելու և մաքրելու աշխատիմք և ամենայն ջանասիրութեամբ աշխատիմք մեր մոլորեալ եղբայրները համոզելու, նոքա որ կրօքն և ազգութիւնը կը սիրեն՝ ամեն բարի միջոց պէտք է ձեռք առնուն եկեղեցւոյ միութիւնը անեղծ և ան սայթաք պահելու համար. դժուար բան չէ, միայն անդուլ ջանք և յարատեւ կամք հարկաւոր է, յիշեմք, եղբարք իմ, որ մեր

եկեղեցւոյ հիմերը՝ Ս. Թադէոս և Բարդուղիմէոս Ս.առաքեալներէն սկսելով՝ մինչեւ ցսրբոց արեամբն զետեղուած է, ուստի պէտք է պատերազմինք մեր եկեղեցւոյ թշնամեաց հետ։ Եւ մեր ընելիք պատերազմը բարոյական է, միայն քրիստոնք մ' ունիմք թափելու, եթէ այն ալ խնայեմք մեր եկեղեցւոյ հաստատութեանը համար՝ ալ մարդ և Քրիստոնեայ անունները մեզմէ ինքնին կը հեռանան, և ինչ անուան որ արժանաւորութիւն ունիմք այն պէտք է զգենումք...։

"Եղբայրներ, թէ որ մէկը ճշմարտութենէն մոլորի, և մէկը զանի դարձի բերէ, գիտցած ըլլայ թէ՝ այն որ մեղաւորը իւր մոլորութեան ճանապարհէն կ'դարձնէ, հոգի մը մահուանէ կազատէ, և մեղաց բազմութիւնը կ'ծածկէ" (Յակոբոս Ե. Գլ. 19-20 հմր.)։ Ս.առաքելոյն այս խրատովը մեր պարտականութիւնը պէտք է ճանաչեմք և ըստ այնմ վարուիմք օտարացեալ եղբարց հետ, և եթէ նոքա դարձեալ շարունակեն իրենց յամառութիւնը, այն ժամանակ Ս. դրոց սովրեցուցած և տուած ուրիշ հրահանգաց համեմատ շարժիմք, որով մեզաց պատասխանատուութիւնը իրենց վրայ՝ կը ծանրանայ։

Կուսակրօնութեան վերայ խօսքերնիս վերջացնելով՝ յաջորդ տետրով (4 դր.) պիտի խօսիմք նոցա թարգմանած Ս. դրոց սխալանացը վերայ, և մանրամասնաբար պիտի ցոյց տամք բառերու յաւելումն և բարձումը. իմաստից աղաւաղումը, և այլն և այլն. թէպէտեւ ասկէ յառաջ փոքր 'ի շատէ յայտնեցինք Ս. Բ. տետրակներով մեր բարեմիտ ունկնդրաց և ընթերցողաց, բայց սակայն դաւառացի ազգայնոց խնդրանօքը — Սաղմոսի — թարգմանութեան սխալները պիտի ցոյց տամք. և այնուհետեւ Լուտերական աղանդոյն բազմաճիւղութեան վերայ պիտի խօսիմք։

Սաղմոսի թարգմանութեանց սխալները ցոյց տալերնուս

մի պատճառն ալ այս է, որ նոյն գիրքը մեր ամեն կարդի Աղգայնոց մէջ իբրեւ դասագիրք ընդունուած և գոց ըրած են, և դրաբար չ՝հասկացողներն անգամ նորա միտքը ու ոգին հասկացած են, այնպիսի գիրք մը անհասկանալի կերպով կը թարգմանեն, ինչ նպատակ կրնան ունենալ. դորա թարգմանողները եթէ Հրէական և Հայկական լեզուաց լաւ տեղեկութիւն և հմտութիւն ունէին՝ ուրեմն ինչու՞ այնպէս աղաւաղեցին և ժողովրդեան միտքը պղտորեցին, իսկ եթէ նոյն լեզուաց անհմուտ էին թարգմանողները, ինչ համարձակութեամբ ձեռնարկեցին այն գործին։

Վերջապէս դոցա որ գործերը որքննենք, ճշմարտութեան հակառակ կըտեսնենք, և ճշմարտութեան հակառակ վարուողները ինչպէս կրնան Քրիստոնեայ անուանիլ։

Ահա այս է մեր դարմանաց առարկայ եղող խնդիրը։

Քանզի — Աւետարանական, Բողոքական, Հաւատք և Ճշմարտութիւն — շարունակ այս բառերը և այս անուններով շինուած խօսքերը մեր վրայ կը տեղացնեն. բայց գործադրութեան մտսին շատ հեռի գտնուելով հակառակ ելս կը վարուին։

Ուրեմն սոցա ինչպէս հաւատք ընծայերու է, և հաւատք ընծայողները ինչ խելքի, ինչ սկզբան և ինչ զգացման տէր պէտք է լինին։

Գիտենք որ մելամաղձոտ մարդիկները իրենց անբուժելի հիւանդութենէն ստիպեալ, շատ անգամ իրենք զիրենք կոպանեն, ոմանք թոյն խմելով, ոմանք ծովը նետուելով և ոմանք կախուելով. ասի ընութենէ յառաջ եկած ախտ մ՝է, որն որ բնաւ պատճառ չի կրնար տրուիլ։

Սակայն ճշմարտութեան ճանապարհը որոնելու երթալով գտնելու հնարը չը լինելով՝ կամաւ և գիտութեամբ ան-

ծայր Լարիրինթոսներու մէջ նետուողներուն՝ ինչ տեսակ հիւանդութեան անուն պէտք է տալ։

——

Այսուհետեւ Տեարակնիս փոխանակ Լսարան անուան «Քրիստոնէութիւն և Լուսերական Հայեր» անուամբ պիտի հրատարակուի։

Կը յուսամք որ բարեպաշտ ազգայինք իրենց քաջալերութեամբը՝ մեզ աւելի կը խրախուսեն։

——

Աւետարերի 40րդ. թուոյն մէջ Պատուելի Ց. Զամուրճեանի դէմ յօդուած մը կարդացինք, որուն մէջ նամակագիրը խօսքը ինձ ուղղելով կըսէ թէ՝ ,, բայց այն անյիշ խօսքը բնաւ արժէք չունի մեզի համար ,, ։

Մենք իբրեւ ճշմարիտ Քրիստոնեայ՝ այս խօսքերը բարեմտաբար կընդունինք։

Որովհետեւ խնդիրը կրօնական ըլլալով ճշմարտութեան և ստութեան հրապարակ ելնելուն կը վերաբերի, և որովհետեւ Աւետարերի նոյն գրիչը Հայկական լսարանը գալու համարձակութիւնը չունենալով Ատենախօսութեանց մասին առած տեղեկութեանց վրայ բնականաբար վստահ չէր կրնար ըլլալ. ուստի մեր խօսածներն ալ Աւետարերի գրչին համար արժէք պիտի չունենար, և արդարև այդպէս ըլլալը քաջ գիտնալուս համար նոցա սխալ թարգմանութեանց մի փոքր մասը հրատարակութեամբ ի լոյս ընծայեցինք, որպէս զի իրենց թարգմանութեանց բազմաթիւ սխալներն տեսնելով՝ գոնէ վայրկեան մի մտածեն իրենց գտնուած դրութեան վրայ և ճշմարտութեան ճանապարհը վերադառնան՝ եթէ սխալուած են։

Մենք առ այժմ չենք ուզեր ըսել թէ՝ —Աւետարերի գրիչը նոյն խօսքերով փախուստ տրուած է—. և աւելի

ուրախ կը լինիմք՝ որ խօսքերու ալիք չի տար՝ այլ աւելի գրուածոց հաւատք կընծայէ և կամ իւր ուշադրութիւնը նոցա վերայ կը դարձնէ։

Սպասելիք ուրեմն, մեր ցոյց տուած և հրատարակած սխալներնուս ի՞նչ պատասխան պիտի տայ, և եթէ դարձեալ փախուստ տալու՝ նուաստանայ՝ ինքը մեր առջեւ ի՞նչ արժանիք ունենալը կրնայ մակաբերել և այնուհետեւ դիմակաւոր թերթի մը յօդուածները երեն նիւթ առնելով ինքը-ղինքը թող մխիթարէ։

Կը կրկնեմք խօսքերնիս, Լուսերական Հայոց աշխարհաբարի թարգմանած Ս. գիրքերը՝ սխալներով լեցուն է, և թէ ի՞նչ նպատակաւ այնպէս թարգմանուած է, իրաց պարագաներովը հետաքրքրեալ պիտի յայտնուի։

ՏԻԳՐԱՆ Գ. ԹԱՓԱՄԱՃԵԱՆ

1875 Սեպտեմբեր 27.
Յիւսկիւտար։

1m

4525 - 4526

2013

<< Ազգային գրադարան
NL0031474

<< Ազգային գրադարան
NL0031473

<< Ազգային գրադարան
NL0031472

<< Ազգային գրադարան
NL0031471

<< Ազգային գրադարան
NL0031470

<< Ազգային գրադարան
NL0031469

<< Ազգային գրադարան
NL0031466

<< Ազգային գրադարան
NL0031465

<< Ազգային գրադարան
NL0031464

<< Ազգային գրադարան
NL0031463

<< Ազգային գրադարան
NL0031475

4374 77 80 83
75 78 81 84
76 79 82